№ 207 ՈՒՐԲԱԹ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՈՒՐԲԱԹ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 207

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома .. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հոկտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 3 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

ԲԺԻՇԿԱՊԵՏ
ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւնների.
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ
վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ ցեր. ժ. 1—4-ը և երեկ. ժ. 7—9-ը: Միխայլովսկի պր. № 38. Տելեֆոն № 663.
(Ե.Հ.Կ.) առ. 923. 6—1

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

III

Փոխանակ հակառակորդի՝ ունենալ կուլտուրական զինակից—ահա այն նշանաբանը, որին պարտաւոր է հետեւել Նոր-Թիւրքիան, եթէ նա կամենում է ապրել:

Եթէ ալբանացին այսօր հակառակորդ է Թիւրքական կառավարութեան այն պատճառով, որ վերջինս չէ տալիս նրան լեզուի, գրականութեան և վարչական կեանքի ազատութիւն, վաղը կը դառնայ Նոր-Թիւրքիայի կուլտուրական զինակիցը, երբ իրապէս ստացած կը լինի այդ ազատութիւնները:

Նոյնպիսի զինակիցներ կը լինեն մակեդոնացիները, յոյները, հայերը, արաբները, դրուզները և միւս տարրերը, որոնք ներկայումս հակառակորդներ են բացարձակ կամ գաղտնի կերպով Թիւրքական կառավարութեանը:

Իբրև ապացոյց, որ օսմ. պետութեան բաղկացուցիչ մասերը կարող են միանալ և հանրային գործակցութեան տենչերով ոգևորվել, կարող է ծառայել այն կարճատև արշալոյսային շրջանը, երբ 3 տարի առաջ Թիւրքիայում սահմանադրութիւն աւետվեց լայնիմաստ բովանդակութեամբ և վարդագոյն խոստումներով: Բոլորը ոգևորվեցին օսմ. պետութեան մէջ: Բոլոր քաղաքացիները շտապեցին միմեանց ձեռքերը սեղմելու «եղբայր ենք մենք» ողջագուրանքներով:

Եւ, անկասկած, այդպէս էլ կը շարունակվէր նպաստաւոր տրամադրութիւնը, եթէ պետութեան այս ու այն ծայրում չը կուտակվէին մռայլ ամպեր և չորոտային ենիչերական արհաւիրքների դժոխային պոռթկումներ:

Եթէ, օրինակ, տեղի չունենային Ադանայի սարսափները և բաւարարութիւն ստացած լինէին հայկական պահանջները Թիւրքահայաստանում, եթէ յունական արտօնութիւնները վիճելի հրատարակված չը լինէին, եթէ Բալկանեան թերակղզու ժողովուրդները մերժման և սպառնալիքների ենթարկված չը լինէին, եթէ յարգված լինէին արաբների տեղական ինքնավարութեան խելացի պահանջները, այժմ Թիւրքիան չէր լինի այնպիսի ծանր և խղճալի դրութեան մէջ, որով նա ներկայանում է այսօր: Հայը, մակեդոնացին, ալբանը, յոյնը, արաբը, սեղմված՝ օսմանների շուրջը, հեղինակութիւն կը տային պետութեան ոյժին, և արտաքին աշխարհը պատկառանք կը զգար դէպի ներքուստ ուժեղ և ընդհանուր հայրենասիրութեամբ համակված պետութիւնը:

Նոր-Թիւրքիան, դժբաղդաբար, չը կարողացաւ հետևել այնպիսի քաղաքականութեան, որ պէտք է նրան կորով և ոյժ հաղորդէր: Եւ կորցրեց շատ բան:

Բայց եթէ կայ միջոց ինքնափրկութեան, դարձեալ մեր պարզաբանած միջոցն է:

Գոնէ այժմ Նոր-Թիւրքիան հաստատ կերպով կանգ առնէր այդ ուղիի վրա:

Ա. Քալանթար

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 սեպտեմբերի

Վիեննա.—Պրեվէզայի մօտերը իտալական նաւատորմի կատարած գործողութիւնների լուրերը աւելի են սաստկացնում տիրող անհանգստութիւնը: Վիեննայի մամուլը հակասութիւն է տեսնում Իտալիայի յայտարարութիւնների և իրականութեան միջև: «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէն» ասում է, որ Աւստրո-Ունգարիան Իտալիայի՝ Պրեվէզայի մօտերը ձեռնարկած գործողութիւնների վերաբերութեամբ կը գրաւէ սպասողական դրութիւն: «Ցէյտը» նկատում է, որ իտալական նաւատորմը ալբանական ծովափին մնալը թոյլատրելի չէ, որովհետև այդ հանգամանքը կարող է հրդեհ բռնկեցնել Ալբանիայում:

—

Բեռլին.—Ցիւրիխից ստացված լրագրական տեղեկութիւնների համաձայն, Թիւրք-իտալական պատերազմը արգելք է լինում, որպէսզի Շվէյցարիան ստանայ ռուսական հացահատիկ, որ ստացվում է Սև-ծովից Գենուայի վրայով: Ջրային ճանապարհով եկող հացի հազարաւոր բեռներ, որոնք ուղարկված են Շվէյցարիայի համար, Թիւրքերը գրաւել են: Հացահատիկով բեռնաւորված ուրիշ շոգենաւերը չեն վստահանում դուրս գալ Բրայիլօվից:

—

Կ. Պօլիս.—Կառավարական բարձր շրջանները բանակցութիւններ սկսելուն վրա բարեացակամօրէն են նայում, սակայն երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի շրջանները և զօրքը թշնամաբար են տրամադրված և ցանկանում են պատերազմի շարունակութիւնը, գտնելով որ Թիւրքիան աւելի քիչ բան է կորցնում, քան Իտալիան, որի առևտուրը չափազանց վտանգվում է և որը ահագին ծախսեր է կատարում պատերազմի վրա: Այդ շրջանները յոյս ունեն, որ Տրիպօլիսի ազգաբնակութիւնը երկար ժամանակ ցոյց կը տայ դիմադրութիւն պարտիզանական եղանակով: Տրիպօլիսին ծանօթ օֆիցէրների կարծիքով կարող են զինվել 100,000 արաբներ:

Ռուսական երկու շոգենաւեր, որոնք Թիւրք զինուորներ էին տանում Եմէնից, իմանալով Սուէցում պատերազմի մասին, վերադարձան Եմէն:

Ծովային մինիստրը Սայիդ փաշայի ցուցմունքից յետոյ, թէ իր քայլը հակասահմանադրական է, յետ վերցրեց իր հրաժարականը:

Տրիպօլիսի վալին հաղորդում է, որ միջոցներ են ձեռք առել ազգաբնակութիւնը ռմբակոծութեան հետևանքներից պաշտպանելու համար:

Որովհետև շաբաթ օրը անհնարին կը լինի ժողովել պալատի պատգամաւորների օրինական թիւ, սուլթանական իրադէով պարլամենտի բացումը նշանակված է հոկտ. 1-ին:

Պաշտօնական աղբիւրներից տեղեկացնում են, որ Պրէվէզայի մօտերը երևացել է իտալական նաւատորմը, որի դէմ Թիւրքական նաւերը կրակ են բացել մարտկոցներից:

Տրիպօլիսի վալին Թունիսի վրայով հեռագրում է, որ սեպտ. 16-ին իտալացիները կամեցան հեռանալ, բայց փոթորիկը ու ամրոցներից պարպած կրակը խանգարեցին նրանց: Քաղաքը այժմ մաքրվել է բնակիչներից: Զօրքերը լաւ դիրքեր են բռնել:

Կառավարական շրջաններում սկսում են հանգստութեամբ նայել այն հանգամանքի վրա, թէ կարելի է բանակցութիւններ սկսել Իտալիայի հետ Տրիպօլիսի առիթով՝ պայմանով, որ Տրիպօլիսի վրա հսկէ Իտալիան, իսկ Թիւրքիան թէ կառավարէ և թէ ստանայ դրամական շահ: Սայիդ փաշան անպայման կողմնակից է այդօրինակ բանակցութիւններ սկսելուն որևիցէ մի մեծ պետութեան միջնորդութեան հետ, որպիսին կարող է լինել Անգլիան, թէև վերջինիս համար ցանկալի է բանակցութիւններ սկսել Քեամիլ-փաշայի՝ իբրև մեծ վէզիրի հետ: Հէնց այստեղից էլ բղխում են այն լուրերը՝ թէ Սայիդին փոխարինելու է Քեամիլը:

Նաւատէրերի ընկերութիւնը բողոքեց, որ կարգադրված է այլևս չը վաճառել օտարազգի նաւերին:

Նախկին մեծ վէզիրներ Քեամիլ-փաշան, Գազի-փաշան և Մուխտար-փաշան հրաւիրվեցին մեծ վէզիրի մօտ խորհրդակցութեան կաբինէտ կազմելու մասին: Եկաւ միայն Հիլմի-փաշան: Մեծ վէզիրը, նախատեսելով թէ անխուսափելի է զիջումներ շանել Իտալիային, կամենում է կաբինէտին յարակից անել ժէօն Թիւրքերին: Վերջիններս, չը ցանկանալով իրանց վրա պատասխանատւութիւն վերցնել, հրաժարվում են: Քեամիլ-փաշան համաձայն է կազմել կաբինէտը առանց երիտասարդ-Թիւրքերի, բայց սրանք չեն երաշխաւորում, թէ օպպօզիցիա չեն կազմի: Կաբինէտ կազմելու գործը ձգձգվում է:

Կարմիր ծովում իտալական մի յածանաւ կրակել է Թիւրքական «Պէկի-Շեվքէթ» ականանաւի վրա, որը թաքնըվել է մօտակայ նաւահանգստում: Հօդէյդայի մօտերը իտալացիները ջրասոյզ են արել անգլիական դրօշակի պաշտպանութեան տակ գտնվող մի նաւ: Բողոք յայտնվեց անգլիական հիւպատոսարանին:

Զինուորական դատարանը դադարեցրեց «Պրօօդօս» յունական լրագիրը զօրքերի տեղափոխութիւնների մասին տեղեկութիւններ տպելու համար:

—

Լօնդօն.—Րէյտէրին Կորֆուից հեռագրում են, որ դուքս Աբրուցցին ռմբակոծելու սպառնալիքով Պրեվէզայի վալիից պահանջեց յանձնել նաւահանգիստը, թնդանօթները և պատերազմական նաւերը:

—

Հռոմ.—Առևտրական նաւերի առաքման պատրաստութիւնները արագ կատարվում են: Միաժամանակ իտալական պատերազմական նաւերը գործի են ձեռնարկել Ադրիատիկ ծովում:

«Տրիբունային» հաղորդում են Մալտայից, որ տրիպօլիսաբնակ արաբները Իտալիային թշնամի մի ժուռնալիստի ագիտացիայի պատճառով գրաւեցին փախստականների թողած գոյքը և յարձակվեցին մաքսատան պահեստների վրա, սակայն զօրքերը կողոպուտի առաջն առան, որովհետև պահեստներում բացի իտալական ապրանքներից, գտնվում էին ֆրանսիական, գերմանական և անգլիական ապրանքներ:

Փոխ-ծովակալ Ֆարավէլլին հաղորդում է Տրիպօլիսից, որ Թիւրքական բերդապահ զօրքի հրամանատարը անձնատուր լինելու պահանջին խնդրեց սպասել որոշ ժամանակ: Իտալացիները համաձայնեցին: Այսօր ժամանակը լըրանում է:

Փոխ-ծովակալ Ֆարավէլլին սեպտ. 20-ի ցերեկ. ժամը $3^1/_2$-ին սկսեց Տրիպօլիսի գլխաւոր մարտկոցների ռմբակոծութիւնը, որ տևեց մինչև արևմուտք: Թիւրքաց մարտկոցները պատասխանեցին, վնաս չը պատճառելով իտալացիներին: Սեպտ. 21-ին մարտկոցների ռմբակոծութիւնը վերսկսվեց: Ամեն միջոց ձեռք է առնվում, որպէսզի քաղաքում վնասներ չը լինեն: Միայն մի փարոս քարուքանդ է եղել:

Ծովային մինիստրութեան հրահանգի համաձայն, հնարաւորութիւն է տրված անվտանգ հայրենիք վերադառնալ իտալական նաւահանգիստներում գտնվող կամ թէ պատերազմի յայտարարման րօպէին այնտեղ մնած Թիւրքական նաւերին: Ճանապարհին մնացած Թիւրքական նաւերը նոյնպէս կարող են անարգել հասնել իրանց տեղերը:

—

Մօնաստիր.—Տեղիս զօրաբանակի հրամանատար Ֆէհմին նշանակվեց Ալբանիայի ծովային ափերի պաշտպանութեան հրամանատար: Ալբանական ծովափն ուղարկվեցին մի գունդ հեծելազօր, մի գունդ հետևակ և թնդանօթներ: Զէնքի կանչվեցին կամաւորները: Բաժանվում է զէնք:

Յունական սահմանագլխի մօտերը կենտրոնանում են զօրքեր: Բօլգարական սահմանի մօտ գտնվող զօրքերը մնում են իրանց տեղերում:

—

Կ. Պօլիս.—Յունաստանը յայտնեց Բ. Դրան իր չէզոքութեան մասին:

Սեպտեմբերի 20-ին, տեղս եկած աւստրիական դեսպան Պալլավիչինին յայտնեց մեծ վէզիրին, որ Աւստրիան միջոցներ ձեռք կառնէ խաղաղութիւնը Բալկանում պահպանելու համար:

—

Կրակօվ.—«Կուրիէր Պօձօն» դեմոկրատական թերթի մէջ լեհ երիտասարդութիւնը կոչ է տպել, որով առաջարկվում է կազմակերպել լեհ կամաւորների լեգիոն՝ Թիւրքերին օգնելու համար ընդդէմ Իտալիայի: Խմբագրատուն մտան 48 ցանկացողներ:

—

Բուդապեշտ.—Թիւրքաց դեսպանատուն են մտնում շատ ունգար կամաւորներ, խնդրելով թոյլ տալ իրանց մասնակցել պատերազմին:

—

Աթէնք.—Աթէնքի Հեռ. Գործակալութիւնը հաղորդում է, որ ֆրանսիական կառավարութիւնը պաշտօնապէս հրատարակել է իր չէզոքութեան մասին: Միևնոյն տեսակէտն են պաշտպանում նաև Անգլիան և Ռուսաստանը: Այդպիսով ի միջի այլոց Կրետէ կղզին մտնում է չէզոք երկիրների շարքը: Իտալիայի հովանաւորութիւնը Կրետէի վրա կանգ է առնում պատերազմի ժամանակ:

—

Սերաեվօ.—Մահմեդականները բուռն համակրանք են յայտնում Թիւրքիային տրիպօլիսեան հարցում: Շատերը ցանկանում են մասնակցել պատերազմին:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

21 սեպտեմբերի

Հէլսինգֆօրս.—Պարզվում է, որ Աբօյի հօֆհերիխտի նախագահի սպանութիւնը քաղաքական աստառ ունի:

Վիլմանստրանդում և Աբօյում բանտերից ազատ թողին կարմիր գվարդիային պատկանող 66 հոգու, որոնք իրանց պատիժը կրեցին Սվէաբօրգի ապստամբութեան համար:

—

Մադրիդ.—Մինիստրների խորհրդում, Պորտուգալիայում միապետական շարժում սկսվելու հարցի քննութեան ժամանակ, ներքին գործերի մինիստրը զեկուցեց այն միջոցների մասին, որոնք ձեռք են առված սահմանագլխին խիստ չէզոքութիւն պահպանելու նպատակով, և հաղորդեց, որ Գալիսիա նահանգի սահմանի վրա բռնել են մի աւտօմօբիլ 40 մարդկանցով, որոնք դիմելիս են եղել դէպի Պորտուգալիա:

—

Պարիզ.—Տեղումս ապրող միապետականների տեղեկութիւնների համաձայն, կապիտան Կօնսէյրօն 4,000 կամաւորներով կարողացել է մտնել Բրագանսա՝ Պօրտօյի նահանգում: Պորտուգալացի հանրապետական Լիման յայտնեց «Ժուռնալի» աշխատակցին, որ Կօնսէյրօյի փորձը հանրապետականների համար վտանգաւոր չէ:

—

Լօնդօն.—Երկաթուղային գործադուլը Իռլանդիայում վերջացաւ:

—

Նոր-Օրլէան.—Մի քանի քաղաքներում Իլինի երկաթուղու գործաթողների և աշխատող ծառայողների միջև տեղի ունեցան մի քանի ընդհարումներ. կան սպանվածներ և վիրաւորներ:

—

Բէլգրադ.—Մամուլի մի մասը յարձակվում է Միլօվանօվիչի վրա այն պաշտօնական հերքման առիթով, որ ազդարարում է, թէ սերբիական կառավարութիւնը մօբիլիզացիայի չէ ձեռնարկել:

Սերբիայի վրայով Սալօնիկից մեկնեցին 200 իտալացիներ, որոնք ստիպված էին հեռանալ Թիւրքիայից:

—

Տօկիօ.—Արտաքին գործերի մինիստրը ռուսաց կայսերական կառավարութիւնից շնորհակալութեան թուղթ ստացաւ Ստօլիպինի մահվան առիթով ցաւակցութիւն յայտնելու համար:

—

Բուխարեստ.—Մամուլը ընդհանուր բարդութիւններ է նախատեսում Բալկանում:

—

Պեկին.—Անկարգութիւնները Սիչուանում օրէ-օր աճում են և սպառնում են Չինցինֆուին: Իւննանի և Խուբէյի զօրքերը գտնվում են Ուչունում և բանակցութիւններ են վարում կառավարութեան հետ: Չինական կառավարութիւնը արտօնեալ պայմաններ է սահմանում կօրէացիներին չինահպատակութեան ընդունելու համար:

Սկսվեցին մահմեդական անկարգութիւններ Գանսու նահանգում:

Ուլեասուդայի զինապահեստը ձեռք է բերել 123,000 լամի գերմանական հրացան և փամփուշտ:

Ազգային օրհներգը հաստատվեց յատուկ հրովարտակով:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 սեպտեմբերի

Թաւրիզ.—Կենսական մթերքների մեծ պակասութիւն է: Հացը քառապատիկ թանգացել է:

Համոզվելով որ ոյժով անկարելի է վերցնել Թաւրիզը, Շուջա-ուդ-Դովլէն մի շաբաթ է, որ անգործ է: Շահսէվան և Ղարադաղի խաները սկսում են ցրվել, վախենալով Եփրեմից, որ իր զօրամասով Ատրպատական չը գայ:

Ռահիմ-խանը և նրա մի քանի ծառաները գաղտնաբար չարչարանքների ենթարկվեցին քաղաքային արսէնալում անջումանի անդամ Միրզա-Աղա-Բօզլուայի ներկայութեամբ, որ կատարում է նահանգապետի պարտականութիւնները:

—

Թէհրան.—Կաշան մտան պարսիկ 350 կօզակներ երկու թնդանօթներով և գնդակացիրներով ռուս հրահանգիչ օֆիցէրներ Գրիգորօվի, Զաբարսկիի և Զապօլսկիի հրամանատարութեամբ Նաիբ-Հուսէյն աւազակին հետապնդելու համար: Ինչպէս յայտնի է, Նաիբ-Հուսէյնին վերջերս գերել էին բախտիարները, բայց նրան աջողվեց փախչել: Պէտք է ասել, որ յիշեալ աւազակի դէմ կառավարութիւնը ահա 30 տարի է ապարդիւն կռիւ է մղում:

Զերգէնդէում ապրող մարդիկ ներկայացան պրինց-խնամակալին և մինիստր-նախագահին և իրաւունք ստացան փոխադրվել Թէհրան:

—

Լօնդօն.—«Թայմսին» հեռագրում են Սիմլից, որ Հարաւային Պարսկաստանում շարունակվող անկարգութիւնների պատճառով վճռված է ուժեղացնել բրիտանական հիւպատոսարանների պաշտպանութիւնը: Երկու հեծելազօրի կարգադրված է պատրաստ լինել մեկնելու Պարսկական ծոցը:

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

X

Թուրինօյի միջազգային ցուցահանդէսը

Թուրինօ (Իտալիա), 12/25 սեպտ.

Ահա մի շաբաթ է, որ գտնվում եմ Թուրինօ քաղաքում, ուր այս տարի կազմակերպված է միջազգային ցուցահանդէս ճարտարապետութեանց և աշխատութեան (Exposition Internationale des Industries et du Travail): Այս համաշխարհային ցուցահանդէսը կազմակերպված է Թուրինօյում ի պատիւ Իտալիայի անկախութեան և այժմեան միացեալ թագաւորութեան 50-ամեայ յոբելեանին:

Ինչպէս պատմութիւնից գիտենք, Իտալիան ամբողջ 1400 տարի քաղաքականապէս պառակտված և բաժանված էր և կազմում էր մանր պետութիւններ, դքսութիւններ, իշխանութիւններ, որոնց մէջ կային և այնպիսիները, ինչպէս օրինակ Վենետիկի հանրապետութիւնը, Ֆլօրանսի, Պիզայի, Գենուայի իշխանութիւնները, որոնք մի ժամանակ շատ զօրեղ և ծաղկեալ տէրութիւններ էին և իրանց ազդեցութիւնը տարածեցին մինչև Արևելք: Հռոմն ևս կազմում էր մի առանձին իշխանութիւն, որի պետը պապն էր, որ այդպիսով հանդիսանում էր ոչ միայն կաթօլիկ եկեղեցու ընդհանուր հոգևոր պետը, այլ և աշխարհական իշխան Հռոմի երկրի վրա։ Երբ ապագայում այդ իշխանութիւնները, հանրապետութիւնները սկսեցին տկարանալ, կորցնել իրանց ույժը, կամ նուաճվեցին Նապօլէօն I կայսրի և կամ Աւստրիայի ձեռքով, Իտալիայի բոլոր հայրենասէրների ջարքերը, մտածմունքը ուղղվեցին առ այն, որ բոլոր այդ պառակտեալ, նուաճեալ, թուլացած իտալական երկիրներից կազմեն մի ազատ և անկախ պետութիւն, մի հատիկ թագաւորութիւն։ Եւ 50 տարի սրանից առաջ, այն է 1861 թ. փետրվարի 18-ին, գումարվեց Թուրինօ քաղաքում առաջին իտալական ազգային ժողովը, բաղկացած 443 պատգամաւորներից, որ մարտի 14-ին հրատարակեց Սավօյա իշխանութեան (որի մայրաքաղաքն էր Թուրինօն) պետ Վիկտոր Էմմանուէլ II-ին առաջին թագաւոր ազատ և միացեալ Իտալիայի, 25 միլիօն բնակիչներով (այժմ, 50 տարուց յետոյ, Իտալիայի ազգաբնակութիւնը 33 միլիօն է)։ Ազգային ժողովը նոր թագաւորութեան մայրաքաղաք հրատարակեց Հռոմը, բայց որովհետև Հռոմը պատկանում էր պապին և Ֆրանսիան պաշտպանում էր պապին, ուստի Թուրինօն մնաց ժամանակաւորապէս մայրաքաղաք, մինչև որ 10 տարի յետոյ՝ 1870 թ. Վիկտոր Էմմանուէլ II նուաճեց Հռոմն էլ և դարձրեց իր մայրաքաղաքը։ Մինչ այդ՝ նոր թագաւորութեան հետ միացվեց և Վենետիկը, որ պատկանում էր Աւստրիային և Ֆլօրանսը։

Այդ օրից անցել է 50 տարի։ Եւ 50 տարվայ ընթացքում Իտալիան, զարգանալով խաղաղութեան մէջ, բարգաւաճեց տնտեսապէս, նիւթապէս, մտաւորապէս և գեղարուեստապէս։ Եւ ահա նա կամեցաւ ցոյց տալ աշխարհին, թէ 50 տարվայ մէջ ինչ առաջադիմութիւն է գործել արուեստների, գեղարուեստների, գիտութիւնների, վաճառականութեան, արդիւնաբերութեան, ճարտարապետութեան, մեքենական գիտութիւնների և քաղաքակրթութեան մէջ և մտածեց կազմակերպել Թուրինօ քաղաքում, ուր 50 տարի առաջ ստեղծվել էր նոր, անկախ, ազատ Իտալիան, մի միջազգային ցուցահանդէս։

Տուրինօ քաղաքը կենտրօնական և մեծ քաղաք է, ունի 400,000 բնակիչ. նա համարվում է դուռն Իտալիայի, որովհետև կապված է երկաթուղային և շոգենաւային ուղիներով երկրագնդիս բոլոր երկիրների հետ։ Չը նայելով որ շատ հին քաղաք է, բայց աչքի է ընկնում իր մաքրութեամբ և գեղեցկութեամբ։ Ու նա կարողացել է կազմակերպել իրան և Իտալիային արժանի ցուցահանդէս, որի նկարագրութիւնը կը տամ յաջորդ անգամ։ Հ. Առաքելեան

ԻՏԱԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՎՏԱՆԳՈՒՄԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Անկասկած է, որ Իտալիան, որպէս զինուորական ույժ, զօրեղ է Թիւրքիայից։ Նրանց կռւի վախճանը պարզ է, եթէ դա սահմանափակվի միայն պատերազմի դաշտով՝ ցամաքի թէ ծովի վրա։ Բայց Թիւրքիան սպառնում է Իտալիային ժամանակակից մի նոր միջոցով՝ իտալական ապրանքների բօյկօտով, իտալական վաճառականական շահերի քայքայումով։ Մենք գիտենք անցեալի փորձերից, որ Թիւրքիան ընդունակ է բօյկօտի. ապա հետաքրքրական է գիտենալ Իտալիայի տնտեսական շահերի չափը Թիւրքիայում։ Այդ շահերը թէև ներկայումս այնքան էլ մեծ չեն, բայց օրէցօր աճում են։ Վերջին 10—15 տարիների ընթացքում Իտալիան գրաւել է Թիւրքիայի առևտրի մէջ առաջին տեղերից մէկը, յետ մնալով միայն Անգլիայից, Աւստրիայից և Ֆրանսիայից։ Իտալիան ներմուծում է ապրանք Ռուսաստանի հաւասար, իսկ արտահանում է երկու անգամ աւելի։ Իտալական առևտրի հաշւեկշիռը հաւասար է 30,000,000 րուբլու։ Իտալական շոգենաւերը, որ գործ ունեն թիւրքական նաւահանգիստների հետ, բարձում են 600,000 տոն։ 14 շոգենաւային գծեր գործում են իտալական և թիւրքական նաւահանգիստների միջև։ Իտալիան ներմուծում է՝ ալիւր, բամբակի մանուածք և գործուածքներ, ֆէսեր, կերպասէ գործուածքներ, կօրալներ և այլն։ Եթէ բօյկօտը իրագործվի, առանձին վնաս կը կրեն ֆէսի ֆաբրիկաները։ Թիւրքիայից Իտալիան արտահանում է հում նիւթեր, որոնց կարիքը մեծ է Լոմբարդիայի արդիւնագործութեան համար, այն է՝ թաց բոժոժ, մետաքսի թել։ Արտահանվում են նոյնպէս բամբակ, պանիր, հացահատիկներ, ձիեր, պտուղներ և կանաչեղէն. Ներմուծված ապրանքների արժէքն է 245 միլիօն պիաստր, իսկ արտահանվածինը՝ 100 միլիօն, ասել է իտալական շահերը $2^1/_2$ անգամ աւելի կը տուժեն, քան թիւրքականը։

Բացի առևտրական յարաբերութիւններից՝ Իտալիան շահագործում է Թիւրքիային և ֆինանսական տեսակէտից։ Կ. Պօլսում և և Զմիւռնիայում բաւական աջող գործ են տեսնում իտալական բանկերը, գլուխ ունենալով Societa Commerziale d'Oriente.

Թիւրքիայում մշտապէս ապրում են մինչև 50,000 իտալացիներ, որոնց մեծամասնութիւնը պարապում է առևտուրով, կազմելով խոշոր և հաստատ գաղութներ։ Առաւել նշանաւոր է Զմիւռնիայի գաղութը, որ նշանաւոր չափով իտալացրել է այդ քաղաքը։ Կան բազմաթիւ կազմակերպված ընկերութիւններ, որոնք աջող կերպով տարածում են իտալական ազդեցութիւնը երկրի մէջ, գլխաւորապէս ծովեզրեայ մասերում։ Այդպէս՝ Զմիւռնիայում նրանք հիմնել են ուսումնարան, որի շէնքը նստել է 300,000 լիրա։

Բօյկօտը և իտալացիներին հեռացնելը կը քայքայեն Իտալիայի հասած առաջադիմութիւնը Թիւրքիայում։ («Р. В.»)

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԻՆ

Կ. Պօլիս, 4 սեպտեմբեր

Ուրբաթ օրուան ազգ. ժողովի մեծամասնութիւն չունենալը ամենավատ տպաւորութիւն բրաւ հանրութեան վրայ։

Երևակայեցէք թէ նոյն իսկ տեղական եւրոպական մամուլը իր ներկայացուցիչները փութացուցած էր Ղալաթիոյ խորհրդարանը, հասկնալու համար թէ հայոց ազգային ժողովը ի՞նչ որոշում պիտի տայ Հայաստանի հարստահարութեանց մասին։ Կառավարական շրջանները մէջ ալ նոյնքան մեծ հետաքրքրութիւն կար, հասկնալու համար թէ հայերու ազգ. ժողովը կառավարութեան ինչ առաջարկներ պիտի ներկայացնէր։ Այս ընդհանուր հետաքրքրութեան մէջ միայն մեր երեսփոխաններու մէկ մասն էր, որ անտարբեր մնացած էր և կարելի չէր եղած լրացնել 71 թիւը, օրինական մեծամասնութիւն ունենալու համար։

Գիտցուեցաւ, որ ժողովի մասնակցելու իրաւունք ունեցող, այսինքն հիմա պաշտօնի վրայ գտնուող երեսփոխաններուն թիւն էր 113, ինչ որ բաւական պատկառելի թիւ մըն է երեսփոխանութեան համար, որ շատ անգամ ասկէ նուազ թուով անդամներ ունեցած ատեն կրցած էր 71 թիւը լրացնել և լիագումար նիստեր ընել։

Երեսփոխանութեան ամբողջ կազմը լրանալու համար՝ հարկ է նաև կատարել 27 երեսփոխանաց ընտրութիւնը։ Սակայն դիտել տալ թերևս աւելորդ չէ, թէ մեր սահմանադրութեան հիմնադրութենէն մինչև հիմա, 50-ամեայ ամբողջ շրջանին, երբէք չէ եղած ատեն մը, որ 100—110 երեսփոխանէն աւելի պաշտօնի վրայ գտնուած ըլլան։ Միշտ 30—40 աթոռ թափուր գտնուած է զանազան պատճառներով։

Վերջին ժողովին ներկայ գտնուելու կարող էին այս 113-էն միայն 99-ը, զի 14 երեսփոխաններ ճամբորդութեան և հիւանդութեան բանաւոր պատճառներով պարտաւորուած էին բացակայել։

Սակայն տեսնուեցաւ, թէ 99 երեսփոխաններէն միայն 66-ը բարեհաճած էին ժողովին ներկայ գտնուիլ, և 33-ը ($^1/_3$-ը ճիշդ) ժողովին չէր եկած առանց ոևէ բանաւոր պատճառի, դատապարտելի անտարբերութեամբ մը։

Անոնց հաւանօրէն կը պակսի ազգային զգացում և ազգային ցաւերու գիտակցութիւն, զի հակառակ պարագային անոնք անվրէպ և նուիրական պարտականութիւն մը կատարելու լուրջ գիտակցութեամբը պիտի փութային ներկայ գտնուիլ և կատարել իրենց պարտքը։ Շաւայ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գիւղացու աղքատութեան պատճառներից մեծագոյնը

Սաղեան, 13 սեպտեմբերի

Շամախու շրջանի հայ գիւղացիութեան ապրուստի միակ աղբիւրը այգեգործութիւնն է։ Ուրաքանչիւր գիւղացի աշխատում է իր խոպան հողը «ավադ» անել, այգի գցել, իսկ նրանք, որոնք զուրկ են հողից, դիմում են ամեն տեսակ միջոցների՝ իրանց այգիների թիւը բազմացնելու։ Սակայն չը նայելով այդ ցանկալի ձգտումներին, շրջանիս հայ գիւղացիութիւնը միշտ նոյնն է. նրանք կուլտուրապէս ոչ մի կերպ առաջ չեն գնում։

Գիւղացի բանիմացները այդ բանը վերագրում են նրան, որ հարուստները ամեն կերպ աշխատում են ճնշել աղքատներին։ Եւ դա միանգամայն իրաւացի է և հասկանալի, որովհետև աղքատը շարունակ գործ ունի հարուստի հետ, և եթէ հարուստը շահ չունենայ աղքատից, հազիւ թէ նա «լայաղ» անի աղքատի հետ խօսելու անգամ։ Աղքատին փող է հարկաւոր, որ նրանով իր այգին մշակի, որպէս զի թէ այգին ավադ մնայ և թէ նրանից պտուղ ստանայ։ Նա փող չունի, դիմում է հարուստի օգնութեանը, և գիտէք, ընթերցող, թէ վերջինս ինչ է անում. հարուստը տալիս է այդ փողը միայն այն պայմանով, որ փողի և նրա տոկոսի դիմաց խաղող ստանայ իր ժամանակին։ Այլ կերպ նա չէ համաձայնվում։ Աղքատը ստիպված՝ վերցնում է հարուստի փողը որոշված տոկոսով, այն է՝ եթէ վեց ամիս ժամանակով է տրված գումարը, պարտապանը պարտական է մէկ րուբլուն տալ 10 ֆունտ խաղող, իսկ եթէ մէկ տարի ժամանակով է տրված փողը, պէտք է տայ 20 ֆունտ խաղող։

Ուրեմն, տեսնում էք, ընթերցող. եթէ խաղողը ծախվում է թաղարը (25 պուդ) 25 րուբլով, պարտապանը տալիս է պարտատիրոջ 25 տոկոս (100 րուբլու տոկոսը լինում է 25 պուդ խաղող)։

Խաղող տալով պարտապանը շատ բան է կորցնում. առաջինը, որ խաղողը գինի դարձնելուց արժէքը շատանում է, երկրորդը, որ խաղողի չէչից ստացվում է բաւականաչափ օղի։

Ահա թէ որքան զրկանքներ են կրում շրջանիս հայ գիւղացիները, և ինչպէս են շահվում և աւելի հարստութիւն դիզում իրանց ունեցածի վրա վաշխառու հարուստները։

Այսպէս է ներկայ իրականութիւնը հայ գիւղացիութեան...։ Չը կայ նախանձախնդիր երիտասարդութիւն, չը կայ աղքատ դասակարգի շահերի պաշտպան ինտելիգենցիա, և եթէ կայ էլ, նրանց թիւը շատ չնչին է, նրանք երկնչում են հարուստի սպառնալիքներից։

Այս դէպքում մնում է մեզ ասել՝ անհրաժեշտ է գիւղական բանկը. նա կը փրկի խեղճ ու կրակ աղքատին վաշխառու հարուստից։ Կ. Աղասեան

Կենսական մթերքների թանգութիւն

Խօջաւէ (Խիվայի խանութիւն), 8 սեպտ.

Այս տարի բերքը Խիվայում, համեմատած անցեալ տարիների հետ, շատ միջակ է։ Վար ու ցանքսի նշաններից լաւ ապագայ էր խոստացվում, բայց ամառն անցաւ չը տեսնված շոգ եղանակներով։ Ամբողջ 4 ամիս է մի կաթիլ անձրևի երես չենք տեսել։ Ջրի պակասութիւնը զգացվեց ամեն տեղ։ Խիվայի միակ ջուրը վերցվում է Ամու-Դարիայից, այն էլ արհեստական կերպով. ամեն գիւղաքաղաքների միջով հոսում է մի մեծ առու, և այդ առուն այս տարի ջրի երես չը տեսաւ. ջրի երես չը տեսաւ նաև վար ու ցանքսը։ Ամերիկական բամբակը լաւ բերք է խոստանում։ Ցորենի ու զանազան կենսական մթերքների թանգութիւն է. ցորենի բաժմանը (1 պ. 10 ֆունտ) ծախվում է 3 ր. 50 կօպէկով, գարին 2 ր. 40 կ., եգիպտական ցորենը 1 ր. 80 կ., ոչխարի մսի ֆունտը 20 կ.։ Ահա առևտրի ընկնելու պատճառը։ Գիւղացիները հազիւ կարողանում են կառավարել իրանց ընտանիքը. գիւղացու միակ յոյսը «ծօնջի» սերմն էր, որ վերջին տարիներս մեծ քանակութեամբ արտահանվում էր արտասահման, այն էլ գները այս տարի ընկած են՝ բաժմանը 6 ր. 40 կ. արժէ։ Մինման

Զտված ջուր

Մերվ, 11 սեպտեմբերի

Մերվում առողջարար ջուր ունենալու խնդիրը գլխաւոր հարցերից մէկն է եղել միշտ։

Մերվը իր գոյութեան օրից ի վեր գործ է ածել քաղաքիս միջով հոսող Մուրղաբ կոչված գետի ջուրը, որը—մանաւանդ ամառը—զանազան աղտեղութիւններով է լցված լինում. ամեն օր առանց բացառութեան տեսնում էք սատկած ձիու, շան և այլն դիակներ։

Ահա այդ բանը ի նկատի ունենալով է, որ քաղաքիս առաջաւոր դասը, նոյնպէս ադմինիստրացիան հոգացել են ունենալ ջուր զտելու մեքենայ, որի կառուցումը յանձնված է ինժ. Նաւասարդեանին և մօտ օրերս կը սկսվի գործի։

Սա մի առաջաւոր քայլ է, որով ժողովուրդը կազատվի այն զանազանակերպ հիւանդութիւններից, որոնց ենթակայ է եղել տարիներից ի վեր։ Մակոյկ

Սովի ուրուականը

Գանձակ, 17 սեպտեմբերի

Ամեն բանի թանգութիւն է. գարու պուդը 1 ր., ցորենինը 2 ր.։ Եւ այս թանգութիւնը ոչ թէ միայն Գանձակի համար է, այլ ընդհանուր է ամբողջ նահանգի համար և ցաւալին այն է, որ օր ըստ օրէ թանգանում է. սովի ուրուականը պատրաստվում է շարժվելու դէպի գիւղերը։ Գանձակի նահանգապետ Կօվալեօվը մի համակրելի գործի սկիզբը դրեց. հրամայեց բոլոր գիւղերի ծխերից տարեկան մի րուբլի հաւաքել. որոշ ժամանակից յետոյ սա լինելու է մի պատկառելի գումար, որից այսպիսի տարիներում պիտի օգտվեն գիւղացիները առանց ուրիշների օգնութեանը դիմելու. ցաւալի է, որ գումարը դեռ փոքր է։

Ս. Յովհաննէս եկեղեցու շինութեան վերանորոգութիւնը սկսել են. բանում են 2 մշակ 1 սայլով՝ այդ էլ ոչ ամեն օր։ Ինչպէս տեղեկացայ, գանձակեցիք չունեն գրընթերցարան, այլ ունեն ընդարձակ բամբասանքի, աստ-կօսէների լաբիրինթոս։ Փօրատէր

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մօսկվա, 15 սեպտեմբերի

Սեպտեմբերի 11-ին նշանակված էր տեղիս կաթողիկոսական պատուիրակի ընտրութիւնը. եկեղեցին լի էր հոծ բազմութեամբ, և այդպիսի բազմամարդ ժողով հազուագիւտ մի երևոյթ է Մօսկվայում. ներկայ էին 72 ծխական և բազմաթիւ ուսանողութիւն ու կողմնակի անձինք։

Յարութիւն աւ. քահանան բանալով ժողովը մի բանախօսութեամբ բացատրեց հասարակութեանը ժողովի խոշոր նշանակութիւնը և հրաւիրեց լրջօրէն, խղճի մտօք կայացնել պատուիրակի ընտրութիւնը։ Ապա կարդալով առաջնորդի հրահանգ-գրութիւնը՝ առաջարկեց ընտրել ժողովի նախագահ։ Թերթիկներով առաջարկվեցին Ստ. Մամիկոնեան 29 ձայնով, Կ. Կուսիկեան 17 ձայնով, բժ. Շահ-Նազարեան 19 ձայնով և այլք. Նախագահական աթոռը բռնեց Ստ. Մամիկոնեան, որն իր կողմից ևս բացատրելով ժողովի նշանակութիւնը՝ առաջարկեց խօսել կաթողիկոսական թեկնածուների մասին։

Առաջինը եղաւ Խ. Յովհաննիսեան և մատնանշեց, որ վերջին 5 կաթողիկոսների ընտրութեան ժամանակ այնպիսի դժուարութեանց առջև չէ կանգնած եղել հայ ժողովուրդը՝ ինչպէս այս ընտրութեան։ Արդի պայմաններում ամենից յարմար գտաւ որպէս արժանաւորագոյն հոգևորականների Օրմանեան և Կարապետ սրբազաններին՝ տալով նրանց հասարակական գործունէութեան նկարագիրը։

Ե. Բաղդասարեան, պատճառաբանելով որ սրբազան Օրմանեան առ այժմ դատի տակ է, զուցէ միանգամայն ի զուր, մի փոքր վաղաժամ է գտնում նրա թեկնածութիւնը կաթողիկոսական գահի համար։ Նա առաջարկեց որպէս առաջին ընտրելի Կարապետ եպիսկոպոսին՝ գրուատելով նրա աջող տեսչութիւնը Գէորգեան ճեմարանում, անձնազոհ և նուիրված առաջնորդութիւնը Երևանի ու Ատրպատականի թեմերում։

Ն. Տէր-Մանուէլեան գրուատեց Կարապետ եպիսկոպոսին, իբրև մեր արդի եկեղեցականութեան ամենագաղափարական, պատրաստված և արժանաւոր հոգևորականի, ցոյց տալեց, թէ կամեցան ցեխոտել նրան, նկարագրեց, իբրև Կարապետ եպիսկոպոսի աշակերտ, ճեմարանի տաղանդաւոր ուսուցչութիւնը և տեսչութիւնը, շնորհալի առաջնորդութիւնը և այլն։ Իբրև երկրորդ թեկնածու առաջարկեց Օրմանեանին, շեշտելով որ ժահրոտ իրականութիւնը չը պատկառեց ապականիչ գրոշմը դնել նաև այս արժանաւոր եկեղեցականի վրա միայն մի նպատակով՝ խանգարելու նրա կաթողիկոսութիւնը։

Ժողովում չը գտնվեց մէկը, որ առաջարկէր, գոնէ բազմազանութեան համար, մի ուրիշ թեկնածութիւնը կամ ճառախօսներին մի բան առարկէր։ Նախագահը, տեսնելով որ ոչ մի առարկող կայ և ոչ նոր խօսող, խնդրեց ձեռք զարկել պատուիրակի ընտրութեան։ Մ. Բունիաթեան առաջարկում է փոխանակ թերթիկներով (ինչպէս սովորաբար եղել է) բերանացի տալ պատուիրակի անունը, որպէս զի թեկնածուն իր կարծիքը յայտնէ կաթողիկոսական թեկնածուների մասին, և ժողովականները կարողանան ճանաչել, թէ ում են ընտրում իրանց պատուիրակ։ Պարոնը խնդրեց իր առաջարկը քուէարկել, բայց նախագահը մերժեց։

Թերթիկներով առաջարկվեցին Ստ. Մամիկոնեան՝ 30 ձայնով, բժ. Շահ-Նազարեան՝ 20 ձայնով, Կ. Կուսիկեան՝ 15 ձ., Բունիաթեան՝ 8 ձ., Ն. Ժամհարեան, Ալ. Ծատուրեան, Ց. Ժամհարեան՝ 1 ձ.։ Քուէարկվելուց հրաժարվեցին Ստ. Մամիկոնեան, Ց. և Ն. Ժամհարեանները, Մ. Բունիաթեան։ Քուէարկվեցին բժ. Շահ-Նազարեան, Կ. Կուսիկեան և Ալ. Ծատուրեան. ընտրվեց 41 ձայնով ընդդէմ 18-ի բժ. Շահ-Նազարեան։

Ահա, ընթերցող, ժողովի նկարագիրը ճշգրտօրէն, բայց վերջին տարիները ռուսական մի քանի թերթեր (ոչ հարկաւ «Рус. Вѣдомости»-ի նման սոլիդ և լուրջ թերթեր) տենդենցիօզ, միակողմանի և յաճախ միանգամայն սխալ կերպով են նկարագրում տեղական գաղութի ժողովների և ընդհանրապէս հայ իրականութեան պատկերը։ «Моск. Вѣсть» թերթուկի աշխատակիցն անբարեխղճութիւն է ունեցել և ամենևին չը յիշելու բժ. Շահ-Նազարեանի անունը, իբրև թեկնածու պատուիրակի, և ստայօդելու, թէ երբ «խօսվեց Օրմանեան և Կարապետ եպիսկոպոսների մասին՝ անմիջապէս ժողովականների շարքերը սկսեցին նոսրանալ»։ Սա մի այնպիսի անխիղճ սուտ է, նենգամիտ խարդախութիւն փաստերի և ափ-աչկարա կեղծիք, որ մենք գալիս ենք ակամայից այն տխուր և ցաւալի եզրակացութեան, թէ այդ թերթուկներում պարազիտների նման տեղ են գտել այնպիսի գրչակներ, որոնք վաճառքի են հանել իրանց գրիչը, խիղճն ու արդարութիւնը, որոնք մամուլի սրբութիւնը փիկցիա են համարում։ Աւ-Զէն

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԲԱԳՈՒԻ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Բագու, 10 սեպտեմբերի

Ահա 20—25 օր է ինչ հայկական մի մեծ թաղ գաղթականական վայր է ներկայացնում։

Ինչպէս 1905 թ. փետրվարի կոտորածը դադարելուց երեք օր յետոյ հայերը սկսեցին թուրքական թաղերից գաղթել-քոչել, ճիշդ այնպէս ահա 2—3 շաբաթ է, որ նոյն հայերը սկսել են հայկական թաղերից, իրանց սեփական տներից ցիր ու ցան լինել։ Զանազանութիւնը միայն նրա մէջն է, որ 1905 թ. փետրվարին գաղթողները աղի արցունք էին թափում, գաղթողները իրանք էին իրանց բերը մէջքին առած փախչում՝ մէկը թալանված, միւսը բռնաբարված, երրորդի տանը անդամներից մէկը կամ երկուսը սպանված, վիրաւորված, անհետ կորած, ներկայիս գաղթը զուտ պատւի խնդիր է, որը ստիպում է հայ մարդուն իր ընտանիքը առնել ու հեռանալ իր սեփական շէնքից, տնից, սակայն առանց արտասուքի։

Առաջին գաղթի պատճառը՝ կոտորածը՝ քաղաքին տիրապետող թուրք տարրը իր պարագլուխների և հոգևոր պետերի հետ միասին՝ վերագրում էր շէյթանին, որ այդ անյայտ շէյթանն է սարքել և այլն։ Հայերս էլ տեղ-տեղ շատ խորամանկ, իսկ տեղ-տեղ շատ միամտօրէն հաւատում էինք և հրապարակով համբոյրներ դրոշմում իրարու։ Սակայն ում գործն է այժմեան առանց արեան գաղթը։

Ահա մի հարց, որ շատ տխուր էջեր է պարփակում իր մէջ։

1905 թ. յետոյ հայ մարդը, կինը չէր կարող ապրել այն կտուրի տակ, այն տան մէջ, ուր ոչխարի պէս մորթվել է իր ծծկեր մանուկը, պատանի հասակից անց որդին, բռնաբարվել է հասունացած աղջիկը, թալանվել, կրակի բաժին դառել տասնեակ տարիների ընթացքում ճակատի քրտինքով ձեռք բերած տան սարք ու կարգը։ Ուստի նա թողեց արիւնով ներկված բնակարանը, երդվեց յետ չը նայել դէպի այդ թաղերը, որից սարսափահար փախել է և երկիւղից խելագարութեան հասել։ Եւ նրանք, այդ փախչողները ուրախութեամբ տեղաւորվեցին հայկական, ռուսական թաղերի ներքնայարկերում, գոմերում և շրջակայ արուարձաններում՝ մինչև որ կարողացան 4—5 տարվայ ընթացքում, որի ժամանակ ահագին թւով տներ շինեցին, տեղաւորվել և մարդավայել կեանք ստեղծել իրանց համար։

Դրանից յետոյ թուրքերը շատ աշխատեցին, յորդորներ կարդացին հայերին, բայց հայերը չերազեցին անգամ յետ նայել։

Պօգրօմների ժամանակ հայկական թաղերի կրակելը, հրդեհելը, մարդկանց կենդանի այրելը, հայ քահանայի (Խոսխոսունուն) կրակի մէջ ձգել ու կենդանի խորովելը մեծ յոյսեր էին տալիս թուրքերին, որ ահա հայերը ռուս-քրիստոնէից կը զգվեն և կը տեղափոխվեն դարձեալ իրանց (թուրքական) թաղերը։ Բայց հայերը բարւօք համարեցին քրիստոնեայ ռուս տականքների ձեռքին սպանվել, կօզակի գնդակից մեռնել, քան թուրքի ձեռքին, որը կեանքի հետ միասին՝ խաղում էր նաև կանանց ու աղջկերանց պատւի հետ։

Հայերը վերջնականապէս 4—5 տարի կրած չարքաշ կեանքից յետոյ հաստատվեցին Ստանիսլավսկի և Զավօկզալնի քաղաքամասերում, իրանց սեփական տների մէջ, որից յետոյ թուրքերը յոյսները կտրած, մնացին նայելիս իրանց հայկական՝ բայց դատարկ տներին, որոնցից ամսական մի քանի տասնեակ հազար րուբլիներ էին վարձադին ստանում։

Քաղաքային վարչութիւնը, որի ձայնաւորների տներն ևս դատարկվել էին, բայց քաղաքը իրանց ձեռքին էր գտնվում, սկսեց թուրքական անմարդաբնակ թաղերը սալայատակել, էլեքտրական ճրագներ սարքել, քաղաքի դրամարկղից շռայլել քրիստոնեաներին, մանաւանդ հայերին թամաշի բերելու, իսկ հակառակ դրան հայկական թաղերը թողեց անուշադիր, մութ, կեղտոտ տղմի մէջ թաղված։ Սակայն այդ էլ չօգնեց, հայերը իրանց կեղտոտ թաղը աւելի էին գերադասում, քան թուրքական մաքուր և լոյս, բայց պատիւ արատաւորող թաղերը։

Մօտեցան քաղաքային ձայնաւորների ընտրութիւնները։

Հայերին թէ այսպէս և թէ այնպէս հարկաւոր էր ուժեղ թափով մասնակցել քաղաքային ընտրութիւններին, որպէսզի կարելի լինի ձայնաւոր ընտրել այնպիսի բարեխիղճ անձնաւորութիւնների, որոնք համահաւասար կերպով մտածէին ընդհանուր քաղաքի և նրա միջի բնակիչների համար անխտիր կերպով։

Այդ լուծի թօթափումը դուր չեկաւ մեր քաղաքի ինքնակոչ ղեկավարներին, մանաւանդ որ հայերի հետ սկսեցին մասնակցել նաև քաղաքիս ռուսները և այլ քրիստոնեայ ազգերը։ Եւ ահա քաղաքի «հայրերը» սկսեցին շօշափել հայի ամենափափուկ կողմը—պատիւը։

Այդ «հայրերը» որոշեցին քաղաքի կէս թուրքական և կէս-հայկական թաղից տեղափոխել տալ հասարակական կանանց բնակարանները... Երմանիքենդի և Ստանիսլաւսկի թաղի մէջտեղ՝ Հայոց Մարդ. Ընկ. Աշխատանքի Տան մօտերը։ Այդ նրանց չաջողվեց, ինչպէս ասում են, Հ. Տէր-Միքայէլեանի բուռն բողոքի շնորհիւ՝ որպէս այդ Ընկ. փոխ-նախագահը։ Այնուհետև որոշեցին տեղափոխել Զավօկզալնի քաղաքամասը, Բալախանսկոյէ շօսէյի և վերին հայկական թաղերի կենտրօնում։

Չը նայելով բողոքների տարափին, չը նայելով քաղաքագլխին ներկայացրող խմբովին աղերսանքներին, չը նայելով մէջ բերված անհերքելի փաստերին, որ այնտեղ կան ուսումնարաններ, շինվում են աղօթատներ, զուտ անարատ թաղեր են և այլն, այդ բոլորը մնացին անհետևանք։

Հէնց այն օրը, անցեալ ամսի սկիզբներին, երբ սկսեցին հասարակական կանայք իրանց մօցիքուլների հետ իրանց տնային իրեղէններով տեղափոխվել, նոյն օրից էլ սկսվեց գաղթականական հոսանքը նոյն թաղերից։

Ուրիշ ելք չէր մնում հայերին. եթէ չը տեղափոխվէին, մատաղ սերունդը բարոյապէս պիտի փչանար։

Ահա այդ հանգամանքը ստիպեց բաւական թւով հայերի թողնել սեփական տները և քաշվել հեռու տեղ, ազատելու իրանց պատիւը։

Արդեօք դրանով քաղաքային վարչութիւնը շահվեց... արդեօք քաղաքը որևէ օգուտ ստացան…

Ընդհակառակ, ընթերցող, այդ Թաղի հայերը խնդրեցին և առաջարկեցին քաղաքի «հայրերին», որ իրանք, այդ «հայր» կոչված հրէշները քաղաքից դուրս տեղ նշանակեն, ազատ հողաբաժին տան, իսկ իրանք, այդ Թաղի հայերը, իրանց հաշւով մի շարք շէնքեր կառուցանեն, տան այդ հասարակական կանանց, ստացվելիք վարձից իրանց ծախսը յետ վերցնեն, իսկ շէնքը միայ քաղաքի սեփականութիւն և այնուհետև քաղաքը ինքը օգտվի այդ շէնքերից։ Եւ այդպիսի մի առաջարկ մերժվեց…

Դրանից կարելի է պարզ երևակայել, թէ ինչպէս և ինչ արշինով են չափում ու ինչ աչքով նայում քաղաքի ղեկավարները քաղաքի շահերին։ Ս. Գարագաշ

ԳԵՏԱՇԷՆ ԳԻՒՂԻ ՋՈՒԼՀԱԿԱՆՈՑԸ

«Գանձակի ջուլհականոցը» վերնագրով նամակում («Մշակ» № 157) ասել էի, որ տիկ. Ս. Պետրոսեան Արղումանեանցը ընդունում է գանձապահութիւնը և իր վրա է առնում բոլոր ծախսերը կատարելու հոգացողութիւնը։

Ահաւասիկ տիկնոջ կարգադրութեամբ և անմիջապէս նրա ձեռքով Գետաշէն գիւղի ջուլհականոցի համար արված ծախսերը։ Բագու երեք տորք է շինել տուել, իւրաքանչիւրը 46 րուբլի 66$^{2}/_{3}$ կոպ (140 ր.)։ Տօրքերի ծախս Բագուից մինչև երկաթուղու կայարանը բերել տալը եղել է 13 ր. 95 կոպ., երկաթուղու կայարանից մինչև Գետաշէն գիւղը ճանապարհածախսը 38 ր. 25 կ. (38 ր. 25 կ. Գանձակ է վճարված, որից Գետաշէն գիւղի պետական դպրոցի ուսուցիչ պ. Մանասեանց տուել է 18 ր. 25 կ., իսկ մնացեալ 20 ր. տողերիս գրողը), Գետաշէն գիւղում 4 տորք շինել տալու համար՝ Բագւում 24 ր. երկաթի իրեղէններ է գնել, ես գնել է մի ճախարակ, մի վիլակ և զանազան մանր բաներ՝ 15 ր. 95 կոպէկի. ընդամենը Բագու մսխել է 193 ր. 90 կոպ.։ Տիկինը իր մօտ ունեցել է 415 ր., որից հանած 193 ր. 90 կ., մնում է նրա մօտ 221 ր. 10 կոպէկ։

Տիկին Ս. Պետրոսեան-Արղումանեանցը ջուլհականոցի համար թելեր, այլևայլ պիտոյքներ գնելու համար 221 ր. 10 կ. մօտը ունենալով՝ Բագուից գնում է Թիֆլիս, իր հետ վերցնելով, ինչպէս գործին աւելի տեղեակ, հմուտ և փորձված մարդ, վարպետ Արիստակէսեանին, վճարելով Բագուից մինչև Թիֆլիս՝ նրա ճանապարհածախսը 7 ր. 80 կ.։ Չը գիտեմ թէ ինչ է պատահում, և Թիֆլիսում իրարից բաժանվում են։ Տիկինը այնտեղ գնում է Տնայնագործական Կօմիտէտից մանած թելեր՝ 1 պուդ քաթանի, 4 փունտ բամբակի՝ զանազան գոյների, 4 թերթ քառակուսի գծերով թուղթ և զանազան կարևոր իրեղէններ. այդ իրեղէնների գարսելովը վճարում է ընդամենը 78 ր. 93 կ.։ Այդ գումարի չափ Տնայնագործական Կօմիտէտի հաշիւը մօտս է։ Մելիք-Մարութեանի խանութից գնում է բամբակի զանազան գոյների մանած թելեր՝ 2 պուդ 27 փունտ և 18 մսխալ, որ արժէ 96 ր. 48 կ., և ջուլհականոցի համար հրաւիրում վարպետուհի տ. Բրոեանին ամսական 30 ր. ռոճիկով։ Թիֆլիսից մինչև Գետաշէն ճանապարհածախս է վճարել տիկ. Բրոեանին 3 ր. 10 կ., Մարութեանից գնած իրեղէններին՝ 10 ր. 45 կ. և 3 տօրքերի համար գնած ասպերին՝ 13 ր. 38 կ.։ Այսպիսով տ. Ս. Պետրոսեանը Թիֆլիսից սկսած մինչև Գետաշէն գիւղը ընդամենը ծախսել է 210 ր. 14 կ.։ 221 ր. 10 կ.-ից մնում է նրա մօտ 10 ր. 96 կ., և այդ գումարով տիկ. Բրոեանի հետ միասին յունիսի վերջերին գալիս հասնում է Գետաշէն։ Յուլիսի 1-ին ջուլհականոցը սկսում է աշխատել։

Գետաշէն գիւղում, բացի վերոյիշեալներից, տիկ. Ս. Մելիք-Մնացականեանը յանձնում է տիկ. Ս. Պետրոսեան-Արղումանեանին Գանձակի ջուլհականոցի Գետաշէն գիւղում 1909 թ. թողած մթերքները, իրեղէնները, այն է՝ 2 տօրք հին ձևի և զանազան չափսերի, 6 հատ մեծ սանդրեր երկարութեամբ սկսած 13—30 վերշօկ, 585—1680 ատամներով, 84 մսխալ կապած ասպեր, 9 կտոր պրկիչներ (шпарушка), 9 փունտ և 48 մսխալ բամբակի սպիտակ թել, 2 փունտ 23 մսխալ հում քաթանի թել և 90 մսխալ կարմիր ու սպիտակ խառը թել, ընդամենը 13 փունտ և 53 մսխալ։

Տիկ. Ս. Պետրոսեան-Արղումանեանը Գետաշէն գիւղում մնում է 1$^{1}/_{2}$ ամիս, մինչև ս. Աստուածածնի տօնը։ Այդ միջոցին նա ըստ իր հասկացողութեան և հետևում է ջուլհականոցի գործավարութեանը և զննում տիկ. Բրոեանի արհեստագիտութիւնը, որին շատ գովաբանում է։ Արդարև, տիկ. Բրոեանը իր արհեստի մէջ արժանի է գովասանքի։

Նա՝ տիկ. Ս. Պետրոսեան-Արղումանեանը Գետաշէն գիւղում, ըստ իրականութեան պահանջման, տօրքերի մեծ կարիք զգալով, պատուէր է տալիս հիւսն Շամիրին Գանձակում երկու տօրքի համար փայտեղէն գնել և գիւղը բերել տալ, որի համար կանխապէս վճարում է 8 ր. 50 կ., որ մնացեալը յետոյ վճարի։ Ուստա Շամիրը ճշդութեամբ կատարում է տիկնոջ պատուէրը և ներկայացնում 24 ր. 70 կ. գնած փայտեղէնների մի հաշւեցուցակ։ Այդ հաշւեցուցակը մեզ մօտ է։

Գետաշէն գիւղում ջուլհականոցի վրա բոլոր եղած ծախսը լինում է 26 ր. 10 կ. (մանրամասն հաշիւը մեզ մօտ է)։ Տիկ. Ս. Պետրոսեան-Արղումանեանի Բագու գնալուց յետոյ՝ տիկ. Բրոեանը հիւսն Շամիրին երկու տօրք է շինել տալիս տիկ. Ս. Պետրոսեան-Արղումանեանի կարգադրութեամբ գնած փայտեղէններից, պակասորդը նորից գնելով, աւելի մեծ չափսերով, մեծ ծաւալով, քան թէ Բագու շինել տրվածները։ Իւրաքանչիւր տօրք նստում է մինչև 26 ր.։

Տիկնոջ՝ Գետաշէն գիւղից Բագու մեկնելուց յետոյ, մանրամասը մի հաշիւ եմ պատրաստում, ուղարկում Բագու տիկ. Մ. Սահակեանցին, որը մեզ հետ միասին հաւասար գործին մասնակցելիս է եղել, որպէսզի նա ևս ջուլհականոցի դրութեանը, գործերի հետ մերձաւորապէս ծանօթացած լինի, որ ազատ, հեռու մնալով թիւրիմացութիւններից՝ աշխատի միջոցներ ձեռք բերելու ջուլհականոցի գոյութիւնը պաշտպանելու համար։ Այդ հաշիւը տիկ. Մ. Սահակեանը, լաւ զննելուց յետոյ, յանձնում է տիկ. Ս. Պետրոսեան-Արղումանեանին։

1910 թ. նոյեմբեր ամսին, հետս վերցնելով ջուլհականոցի 3$^{1}/_{2}$ ամսվայ մանրամասն հաշիւը և մինչև այդ օրը բոլոր գործուածքներից նմուշներ, գնում եմ Բագու, որ այնտեղ երեքս միասին խորհենք, տեսնենք, թէ ինչ ճանապարհով, ո՞րպիսի միջոցներով կարող ենք ջուլհականոցը պահպանել, գոնէ մի տարի. մինչև այդ՝ մի առանձին նամակով արդէն դիմել էի Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդի օգնութիւնը հայցելու։ Միանգամայն վստահ էինք, որ ջուլհականոցի հաշիւը, գործուածքների նմուշները Բագուի ազնիւ բարեգործներին ցոյց տալով, նրանց ապացուցանելով այն առաջադիմութիւնը, որ կարճ ժամանակում կատարել է ջուլհականոցը, կը կարողանայինք մեծ համակրութիւն և արձագանք գտնել նրանց խոհուն մտքերում։ Սակայն, դժբաղդաբար, հանդիպեցի այնպիսի մի անակնկալ դէպքի, որ հնարաւորութիւն չեղաւ իմ ցանկութիւնը իրագործելու և ակընկալութեանս չափ ջուլհականոցին օգնելու։ Կապված ձեռքերով դիմեցի միայն է. Պ. Մարգարեանին, որը իր խոստման համաձայն վճարեց 50 ր., առաջինի հետ միասին եղաւ 75 ր.։ Այս մասին նամակով յայտնում եմ տիկ. Մ. Սահակեանին։

Մէկ կողմից գործելով, միւս կողմից գործուածքները ծախելով, նորից թելեր գնելով՝ տիկ. Բրոյեանը, ինչպէս ասում են, «քարին քացի տալով», նեղութիւններ կրելով շարունակում է գործը մէկ տարի, չը գանգատվելով որ իր ռոճիկը ժամանակին չէ ստանում։

Ջուլհականոցը այսպէս է բոլորում իր տարին։ Միայն տարվայ վերջին տիկինների կարգադրութեամբ Մօսկվայից ստացվում են 75 ֆ. զանազան գոյների թելեր։

Այժմ դառնանք այն խնդրին, թէ ջուլհականոցը մի տարի շարունակ, սկսեալ 1910 թ. յուլիսի 1-ից մինչև 1911 թ. յուլիսի 1-ը, ո՞րպիսի աշխատանք է ցոյց տուել, որքան մուտք և որքան ծախս է ունեցել։

Ջուլհականոցում, պարբերաբար, աշխատելիս են եղել 7—9 օրիորդներ, շաբաթը 5 օր, օրը 7 ժամ։ Շաբաթ օրը աշխատանքից ազատ են մնացել։ Իւրաքանչիւր օրիորդի աշխատած օրերը ի մի գումարելով՝ դուրս է գալիս 981$^{1}/_{2}$ օր։ Գործել են ընդամենը 797$^{1}/_{2}$ արշ. կտորներ։ Ծախսի արժողութիւնը՝ 254 ր. 88 կ.։ 37 հատ երեսսրբիչներ՝ արժողութեամբ 20 ր. 42 կ., գլուխ ծածկելու 31 հատ աղլուխներ՝ արժողութեամբ 33 ր. 40 կ., 7 հատ սփռոցներ՝ արժողութեամբ 9 ր., 70 հատ թաշկինակներ՝ արժողութեամբ 10 ր. 50 կ., և 32$^{1}/_{2}$ արշ. թէյի սրբիչներ՝ արժողութեամբ 6 ր. 60 կ.։ Ընդամենը 344 ր. 80 կ.։ Գործել են համարներով՝ 54։ Աւելորդ չեմ համարում, օրինակի համար, մէկը համարներից այստեղ պարզել, ցոյց տալու համար թէ ինչպէս է կատարվելիս եղել գործը։ Վերցնենք № 37. այս համարով գործուածքի վրա գնացել է, գործադրվել է բամբակի դեղին թել 1 ֆ. 80 մսխալ՝ արժողութեամբ 2 ր. 29 կ., 32 մսխալ կարմիր թել՝ արժողութեամբ 38 կ. և 16 մսխալ սև թել՝ արժողութեամբ 23 կ.։ Ընդամենը գործադրվել է 2 ֆ. 32 մսխալ թել՝ արժողութեամբ 2 ր. 9 կ.։ Գործել է օրիորդ Սաթենիկը 1$^{1}/_{2}$ օր 12 արշ., արշինը նստել է 25 կ., ծախսի գինը նշանակած է 30 կ.։ Այսպիսի հաշւով էլ գործել են և միւս համարները։

Գործուածքներից ծախված է, գրեթէ բացառապէս գիւղում, 213 ր. 24 կ. արժողութեամբ, ընծայված է 27 ր. 35 կ. արժողութեամբ. մնում էր դեռ չը ծախված գործուածքներ առ 21-ն յուլիսի 104 ր. 21 կ. արժողութեամբ և 26 ֆ. թել 28 ր. արժողութեամբ. ընդամենը 132 ր. 21 կ.։

Այսպիսով տարվայ ընթացքում ջուլհականոցը մուտք է ունեցել՝—Բագուի զանազան անձերից նպաստ է ստացվել 465 ր., գործուածքների վաճառումից 213 ր. 24 կ., Պետերբուրգի Եկեղ. Խորհրդից 200 ր., զանազան անձերից նուէր է ստացվել 5 ր., մի օրիորդի ուսանելու վարձ 3 ր., պատուէրներից 2 ր., Մօսկվայից 75 ֆ. թել՝ արժողութեամբ 66 ր. 64 կ. և 90 ր. տիկիններ Մ. Սահակեանից և Ս. Պետրոսեան-Արղումանեանից։ Ընդամենը 1044 ր. 88 կ.։ Բոլոր ծախսը եղել է՝ տան վարձով, տիկ. Բրոյեանի ռոճիկով՝ 985 ր. 93 կ.։ Առ 1-ն յուլիսի մնում է 58 ր. 95 կ. գործուածք և թել արժողութեամբ 132 ր. 21 կ. և ինվենտար 200 ր. աւելի։

Լրագրի սիւնակները թոյլ չեն տալիս հաշիւը զետեղել իր բոլոր մանրամասնութիւններով, ուստի գրվեց ըստ մեծի մասին ընդհանուր գումարներով։ Հետաքրքրվողը կարող է մեր ձեռքի տակ գտնված մանրամասն հաշւից իր ցանկութեան չափով տեղեկութիւններ ստանալ։ Նկատելի է այն, որ օրիորդները բաւարար արդիւնաւորութիւն չեն ցոյց տուել. սակայն համեմատելով առաջին կիսամեակի աշխատանքը երկրորդ կիսամեակի հետ՝ ակնյայտնի նկատվում է, որ երկրորդ կիսամեակում արդիւնաւորութիւնը աւելի է եղել։ Պատճառը պարզ է։

Առաջիկայ տարվայ համար ջուլհականոցը կարիք կունենայ մինչև 600 ռուբ.։ Յուսանք, որ դրա առաջն էլ առնվի։

Պետական Դումայի անդամ Յ. Սաղաթելեանը գանձակի վիճակը այցելելով՝ այցելեց և Գետաշէն գիւղի ջուլհականոցը, որից բաւականին գոհ մնաց։

Արհեստագիտութիւնը հայ կեանքի իրականութեան մէջ կարևոր է. դա լաւ ապագայ է խոստանում գիւղացիութեանը։ Եւ եթէ մեր բարեգործները ցարդ դեռ ևս չեն սկսել սրտով մօտենալ այդ շինարար գործին, պատճառը այն է՝ նախ, որ նրանք գործին դեռ լաւ տեղեակ չեն, և երկրորդը՝ գործը դեռ ժողովրդականութիւն չէ ստացել, նոր է։ Մեծ հաւատով կը յուսանք, որ ժամանակը կը սրբէ այդ ճանապարհը ամեն խոչընդոտներից։

Մ. Եպիսկոպոսեան

Գէտաշէն (Գանձակի նահ.)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—օ—

ԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

VII *)

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան

Ծնված 1841 թւին, եպիսկոպոս ձեռնադրված 1886-ին, պատրիարք Կ. Պօլսի 1896—1908 թ. թ., այժմ 70 տարեկան։

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի մասին արդէն այնքան շատ բան է գրված, նրա արժանիքներն այնքան բազմակողմանի կերպով դրված են հայ ընթերցող հասարակութեան առաջ, որ կրկին մանրամասնութիւնների մէջ մտնել չարժէ։ Մենք արդէն անցեալ ընտրութեան ժամանակ առիթ ունեցանք «Մշակի» ընթերցողներին ծանօթացնելու այն կարծիքի հետ, որ յայտնել է Օրմանեան արքեպիսկոպոսի մասին յայտնի հայագէտ պատմաբան, Արևելքը շատ լաւ ճանաչող Գելցերը (տես «Մշակ» 1908 թ. № 153)։ Կարծիք յայտնողը մի եւրոպական հեղինակութիւն է, որ ոչ մի գործ ու մասնակցութիւն չունի հայկական կուսակցութիւնների պայքարի մէջ և ուրեմն կուսակցական հաշիւներով չէ առաջնորդվում, այլ ազնուութեամբ և բարեխղճութեամբ իր տպաւորութիւններն է տեղեկացնում մեզ։

Այս րօպէիս, երբ հակառակորդները ամենաանխիղճ միջոցներով զրպարտում են նրան և աշխատում մշտատև ամբաստանութիւնների ներքոյ պահել, իսկ կողմնակիցների ասած ամեն խօսքը անձնական հաշիւներով ու ակնկալութիւններով բացատրվելու վտանգի մէջ է, առանձին արժէք պիտի ունենայ բնականաբար այնպիսի լուսամիտ և անաչառ մարդու կարծիքը, որպիսին Գելցերն է։ Այդ պատճառով էլ՝ յանձնարարելով հետաքրքրվողներին կրկին կարդալ 1908 թւականի «Մշակի» № 153-ը կամ ներկայ տարվայ «Հովիտի» № 15-ը, ուր «Մշակից» քաղուածաբար բերված է Գելցերի կարծիքը, ես այստեղ կը բաւականանամ միայն ամենակարևոր հատուածներն յիշելով։ Գելցերն ասում է. «Կ. Պօլսի այժմեան պատրիարքը (1900 թւին) նորին երանութիւն տէր-Մաղաքիա Օրմանեանն է, հայոց եկեղեցու ամենաականաւոր ներկայացուցիչներից մէկը, միևնոյն ժամանակ նշանաւոր գիտնական… Օրմանեանը միացաւ լուսաւորչական հայերի հետ, շուտով եպիսկոպոս դարձաւ և ստանձնեց Արմաշի (Նիկոմիդիա) պատրիարքական դպրեվանքի ղեկավարութիւնը։ Այդ պաշտօնի մէջ նա մի կողմից մեծ ազդեցութիւն ձեռք բերեց նոր կրթվող երիտասարդ հայ հոգևորականների մէջ, իսկ միւս կողմից ժամանակ վաստակեց իր գիտական աշխատանքների համար։ Այդ պաշտօնից կոչվեց նա հայոց ազգի գլուխը լինելու, մի ծանր պատասխանատու պաշտօն, որ իսկապէս դժբաղդ ժողովրդի այժմեան թշուառ դրութեան ժամանակ մի ծանր խաչ պէտք է համարել։ Սակայն Օրմանեան պատրիարքը ցոյց տուեց, որ այդպիսի ծանր դրութեան մէջ էլ գործել կարող է։ Երբ նա 1899 թւին Զատկին այցելեց յունաց պատրիարքին, հիացրեց յոյներին մի ճառով, որով նա շեշտում էր ոչ թէ յունաց և հայոց ժողովրդական եկեղեցին իրարից բաժանող, այլ միացնող կողմերը… Ինձ համար ցանկալի էր այդ պատւական եկեղեցականի հետ անձամբ ծանօթանալ… Այն ժամերը, որ ես անցրի նորին երանութեան մօտ, իմ արևելեան ճանապարհորդութեան ամենահետաքրքրական և հաճելի ժամերից էին։ Ես շուտով ըմբռնեցի, որ գործ ունեմ արդի Արևելքի ղեկավարող մտքերից ու ամենանշանաւոր անձնաւորութիւններից մէկի հետ… Այդպիսով դժբաղդ հայ ժողովուրդը մի մեծ աջողութիւն ունեցաւ շնորհիւ իր պատրիարքի եռանդի և խոհեմ քաղաքականութեան»։

Այսքանը, կարծում ենք, բաւական է կուսակցական հաշիւներով չառաջնորդվող մարդկանց համար, որպէս զի համոզվեն, թէ յիրաւի՝ ինչպիսի խոշոր արժանիքների տէր անձնաւորութիւն է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը։ Ասենք՝ հակառակորդներն իրանք էլ չեն համարձակվում նրա արժանիքներն ուրանալ, միայն զրպարտութիւններով ու շինծու ամբաստանութիւններով աշխատում են Օրմանեան սրբազանին իբրև թէ դատի տակ պահել, որպէս զի դեկտեմբերի 11-ին հնարաւոր լինի այդ պատրւակով նրա անունը հանել տալ ընտրելիների ցանկից։

Բայց նոյնպիսի զրպարտութիւններ, թէև ուրիշ կողմերից, արվում են Օրմանեանի մասին նաև մեր թերթերում։ Վերջերս պրօֆ. դր. Բազիլ հրատարակեց «Մշակի» մէջ, թէ Օրմանեանը հայոց եկեղեցու «պապն» է ուզում դառնալ. այդ մեղադրանքի միտքն ուրիշ խօսքով այն է, թէ նա հակառակ է հայոց եկեղեցու ժողովրդական ոգուն և պիտի աշխատէ կղերական տիրապետութիւն մտցնել ազգային գործերի մէջ։ Այս նոյն մեղադրանքը բարդեց Օրմանեանի վրա նաև Ա. Աթանասեանը «Մշակի» մէջ։ Մեսրոպ աւ. քահ. Մելեանն էլ եկաւ յայտարարեց, թէ ներկայ 1911 թւականին հրատարակված Օրմանեան սրբազանի գրքերի մէջ ազատամիտ գաղափարներ են արտայայտված, որովհետև առաջներս հայրապետական ընտրութիւն կայ և Օրմանեանն էլ ձգտում է կաթողիկոս դառնալ. ուրիշ դէպքում Օրմանեանը այդպիսի ազատամիտ գաղափարներ չէր պաշտպանի։

Մենք արդէն ուրիշ առիթով հնարաւորութիւն ունեցանք ցոյց տալու, որ այդ բոլոր մեղադրանքները բոլորովին անհիմն են։ Օրմանեան սրբազանի «Հայոց Եկեղեցին» գրքի ֆրանսերէնը գրված է 1909 թւին և հրատարակված 1910 թւի առաջին կէսին, երբ Իզմիրլեան Մատթէոս կաթողիկոսը դեռ կենդանի էր և Օրմանեանը իմանալ չէր կարող, թէ նա յանկարծ կը մեռնի և իր թեկնածութիւնը մէջտեղ կը գայ կրկին։ Այդ գրքի ֆրանսերէն հրատարակութեան մասին գրած գեղեցիկ գրախօսականի մէջ («Մշակ» 1910, № 230) Հ. Ա. յստակապէս շեշտեց այն ժողովրդական հակակղերական ոգին, որով համակված է Օրմանեանի ամբողջ գործը, և ուրախութիւն յայտնեց, որ այդ տեսակէտից նրա մասին մինչև այժմ սխալ կարծիք է տիրել։

Մենք ևս նոյն գրքի հայերէն հրատարակութեան մասին գրած գրախօսականի մէջ առիթ ունեցանք Օրմանեանի լայնախոհ ազատամտութիւնը շեշտելու և օրինակներով ու գրքից բերված քաղուածքներով մեր ասածը հաստատելու (խնդրեմ նորից կարդալ այդ գրախօսականը «Մշակի» այս տարվայ № № 144 և 145)։ Ատրպետի և իմ միջև ծագած բանակռւի առիթով էլ անհերքելի կերպով ապացուցեցինք, որ Օրմանեան սրբազանը մեր եկեղեցու ազգային ժողովրդական հակակղերական ոգու ամենաեռանդուն պաշտպաններից է և իբր ապացոյց բերինք նրա սեփական խօսքերը (համեմատել «Մշակ» № № 163 և 171)։

Այս բոլորից յետոյ ես կարծում եմ, որ պէտք է վերջապէս վերջ ունենան Օրմանեանի կղերական և հակաժողովրդական լինելու մասին տարածված անհիմն առասպելները։ Երուանդ Տէր-Մինասեանց

(Կը շարունակվի)

---

*) Տես «Մշակ» № 206.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երէկ տեղի ունեցաւ Զէլիմ-խան աւազակապետի զոհ ինժենէր Օրլօվսկիի թաղումը։ Յուղարկաւորութեանը ներկայ էին հանգուցեալի պաշտօնակիցները, ինտելիգենցիայի ներկայացուցիչներ և շատ ժողովուրդ։

◆ Մեզ հաղորդում են, որ Նուխու գործակալութեան գիւղերի պատուիրակները սեպտեմբերի 14-ին Նուխում ժողով կայացնելով Համբ. Առաքելեանին ընտրել են Նուխու գործակալութեան կողմից պատուիրակ, որպէսզի հոկտեմբերի 9-ին մեկնէ Շուշի՝ մասնակցելու այն ժողովին, որ Ղարաբաղի թեմի կողմից ընտրելու է մի աշխարհական պատգամաւոր՝ կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու։

◆ Վերադարձան Թիֆլիս Վրաստանի էկզարխ Իննօկէնտի արքեպիսկոպոսը, Թիֆլիսի նահանգապետ Չերնեավսկին և երկր. գլխ. վարչութեան կառավարչի կովկասեան լիազոր Արխիպօվը։

◆ Իրանց ձմերային շինութիւնները փոխադրվեցին հետևեալ ակումբները՝ Արտիստական Ընկերութիւնը, ռուսաց կլուբը, Թիֆլիսի ժողովարանը։ Կրուժօկը և Հաւլաբարի կլուբը կը տեղափոխվեն ամսիս վերջը։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. դահլիճում նշանակված է Կովկ. Հայոց Հրատ. Ընկ. արտակարգ ընդհանուր ժողովը՝ պաշտօնատար անձանց լրացուցիչ ընտրութիւնների և այլ հերթական հարցերի համար։

◆ Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է յօգուտ Ընկերութեան Մակար Ջմշկեանի միջոցով Աղէքսանդր Գերասիմովիչ Ցեցիկեանից ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու Եփեմիա Ցեցիկեանի յիսուն րուբլի (50 ր.)։

◆ Կ. Խ. Վ. Գրէկովը խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետի առաջ թոյլ տալու հրատարակել Թիֆլիսում մի ամենօրեայ ձրի թերթ ռուսերէն՝ «Րէկլամ» անունով։

◆ Սօլդատսկի բազարում բացվեց քաղաքային միկրօսկօպիկ կայան խոզի միսը հետազօտելու համար։

◆ «Т. Л.»-ի ասելով՝ Գօրու գ. Թեղէրի գիւղում անցեալ օրը մեռել է 115 տարեկան մի ծերունի։

◆ Բագուի քաղաքապետը հարցրել է քաղաքային վարչութեանը, թէ ինչ է ձեռնարկել քաղաքը Բագւում Ալէքսանդր II Կայսրին արձան կանգնեցնելու հարցի առիթով։

◆ Սեպտ. 21-ին Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Օսիպ Օսիպօվի դստեր բնակարանից 24 տարեկան աղախին Ելէնա Պօտապօվան գողանալով 606 րուբլու զանազան իրեր՝ անյայտացել է։

◆ Սեպտ. 21-ին, Թէլաւեցի Գարեգին Գալստեանը, 19 տարեկան, որ ապրում է Ելիսաւետինսկայա փող. № 64 տանը, Միքայէլեան փողոցով անցնելիս, իրան կեանքից զրկելու նպատակով, հիւանդանոցի առաջ խմեց նաշատիրի սպիրտ։ Թունաւորվածը պառկած է հիւանդանոցում։

◆ Սեպտ. 21-ին, երեկ. ժամը 6-ին, Խուդադեանի պարտէզում ինչ-որ կռւոյ պատճառով Նիկօլայ Միկաձէն՝ 29 տարեկան՝ դանակով մի քանի վէրքեր հասցրեց Վլադիմիր Սամխարաշվիլիին։ Ցանցաւորը կալանաւորված է, իսկ վիրաւորին տարել են Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Սեպտ. 21-ին, ց. ժամը 4-ի մօտերը, արբած ժամանակ, ոմն Վլադիմիր Ցխվէրաձէ դանակով մի քանի վէրքեր հասցրեց Շղալօբ Ստեպանաշվիլիին։ Ցանցաւորը ձերբակալված է։

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հ. Առաքելեանի «Ուղևորական ակնարկները», որոնք տպվում են «Մշակում», անսպասելի կերպով մեծ օգուտ են տուել «Հօրիզոն» լրագրի խմբագրութեանը և աշխատակիցներին։

Խմբագրութիւնը և աշխատակիցները «Հօրիզոնի» № 207-ի մէջ տպված «Մի նոր խարդախութիւն» յօդուածում պատմում են, թէ առաջին անգամ Հ. Առաքելեանի թղթակցութիւնից տեղեկացել են, որ Կ. Պօլսի պատրիարքական տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսի մօտ կայ պատգամաւորական թեկնածուների մի ցուցակ, որի մէջ յիշատակված են նաև «Հօրիզոն» լրագրի աշխատակիցները։

«Հօրիզոնի» աշխատակիցները ասում են, որ իրանք ոչ մի տեղեկութիւն չեն ունեցել երևան եկած փաստի մասին, և յայտնում են իրանց խորին վրդովմունքը,

> որ առանց իրանց համաձայնութիւնը ստանալու, առանց նոյն իսկ տեղեկութիւն տալու, դրել են իրանց անունները ցանկի մէջ (մանաւանդ որ) «Հօրիզոնի» աշխատակիցները ոչ մի հաճոյք չեն զգում գլուխ պատռելու այնպիսի մի կոչման համար, ինչպիսին է կաթողիկոս ընտրող պատգամաւորը, այն էլ ներկայ հանգամանքների մէջ։

«Հօրիզոնի» աշխատակիցները, որոնք այդպէս վրդովված են ցուցակի գոյութիւնից, պէտք է շնորհակալ լինեն Հ. Առաքելեանից, որ վաղաժամ ազատել է պատգամաւոր լինելու դժբաղդութիւնից, որը «ոչ մի հաճոյք» չէ պատճառում նրանց։

Եւ երևակայեցէք, եթէ յանկարծ դժբաղդութիւնը տեղի ունեցած լինէր և այդ աշխատակիցները ընտրված լինէին պատգամաւորներ, արդեօք կարելի կը լինէր շտկել գործը։ Իսկ այժմ դեռ ժամանակ կայ բողոքելու թեկնածութիւնների դէմ և պահանջելու, որ անունները հանվեն ցուցակից։

Գուցէ Հ. Առաքելեանը չէ էլ ցանկացել այդպիսի մի բարութիւն արած լինել «Հօրիզոնի» աշխատակիցներին, բայց մարդը պատահաբար նրանց ազատել է դժբաղդութիւնից։

Միթէ հօրիզոնականները կարող էին կարծել, որ Հ. Ա.-ի՝ դէպի խաղաղութեան կօնգրէս գնալը կարող էր անսպասելի կերպով մի այդպիսի փրկարար գործ կատարած լինել և իրանց համար։

Բացի այդ առաջին օգուտից՝ կայ և երկրորդը նոյնպէս անսպասելի։

Ինչպէս յայտնի է, 1890 թւականից դէսը եղել է երկու կաթողիկոսական ընտրութիւն՝ մէկը Խրիմեանի, միւսը Իզմիրլեանի։ Երկու ընտրութիւններին էլ «Մշակ» լրագիրը եռանդուն գործունէութիւն է ցոյց տուել, առաջին դէպքում Գ. Արծրունու խմբագիր եղած ժամանակ, երկրորդում՝ ներկայ խմբագրական կազմով։

«Հօրիզոնի» նոյն № 207-ի առաջնորդողը արձանագրում է երկու հոսանք կաթողիկոսական ընտրութեան մէջ՝ հին-պահպանողական-մենավաճառական և նոր առաջադիմական-ժողովրդական։ Հնի ներկայացուցիչն էր մեզանում «Մեղուն». Նրա անունը և տրված է յօդուածում։ Նորի ջատագովն էր «Մշակը», որի արած գործի մասին խօսվում է յօդուածում, բայց անունը չէ տրվում։ Այդտեղ ընդգծված է 1884 թւի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ առաջին անգամ խիստ արտայայտված ժողովրդական ընտրութեան նշանակութիւնը։ Նոյն բնաւորութիւնն էր կրում և Խրիմեանի ընտրութիւնը 1892 թւին։

«Հօրիզոնի» աշխատակիցները Խրիմեանի ընտրութեան ժամանակ գործում էին «Մըշակի» դրօշակի տակ։

Իսկ այժմ «Հօրիզոնը» իր 207-րդ համարում, ցանկալով մաղձ թափել «Մշակի» ներկայ ղեկավարների վրա, բացագանչում է.

Ամբողջ աշխարհը գիտէ, որ ընտրութիւններ սարքելու փէշակը «Մշակի» խմբագրատան փէշակն է 1890-ական թւականների սկզբից մինչև այսօր։ Եւ այդ փէշակը նա ծաղկեցրել է՝ թէ «մարդված փղերի» և թէ յատուկ ագենտների անբարոյական միջոցով։

«Հօրիզոնի» այդ հաւաստիացումը եթէ ճիշդ է, նա բնորոշում է նրա այն աշխատակիցներին, որոնք գործում էին «Մշակի» հետ սիրասիրտ, սեղմված շարքերով, իբրև զինակիցներ, իբրև խորհրդակիցներ և իբրև աւելի ևս մեծ յաւակնութիւն ունեցող գործակիցներ։

Իսկ եթէ այդ հաւաստիացումը ճիշդ չէ, այն ժամանակ նա ստանում է այն անունը, որով մկրտված է «Հօրիզոնի» № 207-ի յօդուածը՝ «Մինոր խարդախութիւն»։

«Հօրիզոնի» աշխատակիցները բացի իրանց գիւտերից զբաղված են «աւագ» և «կրտսեր» բառերի անմեղ և մանկական թեթևամիտ խաղերով։ Եւ որքան իրանք իրանց բաղդաւոր են համարում, կարծելով որ ընթերցողը չի հասկանայ, թէ նրանք խնդրի էութիւնը թողած կողմնակի բառախաղութիւններով են ուզում շշմեցնել ընթերցողին։ Որքան մաշված և հնացած ձևեր են պօլէմիկայի, արդէն սպառ անհամացած և հրապոյր կորցրած։

Առ այժմ այսքան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 15 սեպտեմբերի

Քրիստոնէական կրօնի և վաղեմի եկեղեցասիրութեան ու ջերմեռանդ հաւատի բարեպաշտական օրերը վաղուց կորել անցել են պարսկահայի, մանաւանդ Թաւրիզեցու համար. խաղակրկէսները, պարողներն ու պարուհիները, ձեռնածուներն ու աճպարարները շատ աւելի գրաւիչ են, քան թէ հայ եկեղեցու կրօնական մեղեդին, պատարագը, նախնեաց յօրինած սրբազան երաժշտութիւնն ու քարոզը։ Բարեպաշտութեան չքանալովը չքացել են նաև ազգային-կրօնական հաստատութիւնները՝ եկեղեցիները մաքուր և բարեզարդ պահպանելու սէրն ու սրբազան յարգանքը։

Մտէք մի անգամ կիրակի առաւօտները Թաւրիզի Բերդաթաղի ս. Աստուածածին եկեղեցին. ո՞ւմ էք գտնելու այնտեղ.—երկու կամ երեք ալևոր մարդկանց և նոյն թւով ծեր կանանց։ Այլևս ո՞ւմ համար են քահանաները, պատարագը, արարողութիւններն ու քարոզը։ Հետևելով վերջին տարիների սովորութեան, Թաւրիզեցիները Զատկի և Ծննդեան օրերը միայն գալիս են եկեղեցի. ուրիշ ժամանակ բազմութիւն հաւատացելոց չէք պատահի։ Դեռ այս բաւական չէ։ Ժողովրդի անբարեպաշտ ընթացքին հետևել է նաև յանցաւոր անփութութիւն դէպի եկեղեցու շէնքն և շրջապատը։ Մի րոպէ ամօթ է համարում մարդ մամուլի միջոցով յայտարարելը։ Ատրպատականի թաթար ցեղի ուժեղ և մոլեգնոտ ֆանատիկոսութեան օրերում արդի Թաւրիզեցոց բարեպաշտ պապերի քրտնաթոր ջանքերով գլուխ բերած հոյակապ եկեղեցին աւերման վտանգին է ենթարկվել՝ 7—8 տարիներից ի վեր զուրկ լինելով նորոգութեան և պահպանութեան խնամքից. և եկեղեցու ընդարձակ գաւիթը, որ լիքն է գերեզմաններով ու դամբարաններով, թաղվել աղբակոյտերի տակ։ Ազգային իշխանութեան և ժողովրդի այս աստիճան անտարբերութիւնը վեր է արդարև ամեն մի մեղադրանքից։

Թաւրիզի Բերդաթաղի ուսումնարանների հոգաբարձութիւնը վերջապէս ուշադրութեան առնելով մանաւանդ եկեղեցու նորոգութեան անխուսափելի կարիքը՝ չունենալով միանգամայն նիւթական միջոց, ըստ որում եկեղեցու արդիւնքով հազիւ ուսումնարանների տարեկան բացն են փակում, առանց դէթ հասոյթի մի մասով սրբավայրի ծակոտիքն ու ճեղքերը ծածկել կարողանալու, մի պաշտօնագրով դիմեց 12 տարուց ի վեր Թաւրիզում հաստատված, կ.-պօլսեցի վաճառական Խաչիկ խան Սարաջեանին, խնդրելով որ նա յանձն առնէ իր սեփական ծախսով եկեղեցու նորոգութիւնը։ Խաչիկ խանը առանց խօսքի ընդունեց և կատարեց նորոգութեան գործը՝ անձամբ անձին հսկելով վարպետ բանւորի վրա՝ նախ որպէսզի նորոգութիւնը լինի խնամքով և ծախսը դուրս գայ թեթև։ Ոչ միայն սոսկ եկեղեցու ներքին ու արտաքին նորոգութիւնը տեղի ունեցաւ, այլև եկեղեցու դաւթում գտնվող տպարանի տանիքը, որի երկու գերանները կտրված էին, և այն ըստ արժանւոյն նորոգվեցին։ Եկեղեցու արևելեան կողմն առաւելապէս ծառայելիս է եղել որպէս արտաքնոց. Կ. Սարաջեան խանը երկու կողմերից փայտեայ վանդակներ շինել տուեց, որով ազատեց եկեղեցու այդ մասը և այնտեղ հանգչող գերեզմանները մարդկային աղտեղութիւնից։

Հայկազուն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Արդարադատութեան մինիստրութեան մէջ համոզվում են, որ ռուսական ոստիկանութեան գլխաւոր չարիքը նրա բազմաթիւ օրգանների մէջ է. օրինակ՝ ժանդարմների կորպուս, պահնորդական բաժանմունք, ոստիկանութեան դեպարտամենտ և վերջապէս ընդհանուր ոստիկանութիւն, որոնք իրար դէմ մրցում են։ Ուստի ոստիկանութիւնը պէտք է վերակազմել այն մտքով, որ ամբողջը մի լինի և մի ընդհանուր ոստիկանութիւն հաստատվի։

◆ Պահնորդական բաժանմունքի բարենորոգման նախագիծը մինիստրների խորհուրդն ընդունեց։

◆ Սենատոր Տրուսևիչը արդէն ձեռնարկել է ամենախիստ կերպով քննելու Կիևի պահնորդական բաժանմունքի գործերը։

◆ Կիևի պահնորդական բաժանմունքի անուշադիր վերաբերմունքը դէպի հանգուցեալ պրեմիէր-մինիստր Ստոլիպինը երևում է ի միջի այլոց նրանից, որ նա թոյլ չէր տուել Ստոլիպինի կառքին հանդէսների ժամանակ հետևել Կայսրի շքախմբին. բացի դրանից Ստոլիպինին չեն տուել աւտոմոբիլ՝ միջոցների սղութեան պատճառով, մինչդեռ, «Гражданинъ»-ի ասելով, Կուրլովի ստորին ծառայողները պանդոկներում խմելիս են եղել շամպայններ, և այդպիսով պահնորդական բաժանմունքի ծախքերը հասել են մէկ միլիօն րուբլու։

◆ «Р. Сл.»-ի Պետերբուրգի թղթակիցը արժանահաւատ աղբիւրից հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութիւնը արմատապէս պէտք է վերակազմութեան ենթարկվի։ Քաղաքական բնաւորութեան բոլոր ֆունկցիաները բոլորովին բաժանվելու են նրանից։ Նաև անջատելու են չեմստվային բաժինը։ Ներքին գործերի մինիստրութեան իրաւասութեան տակ թողնելու են միմիայն ոստիկանութեան ու ներքին կարգուկանոնի պահպանութեան ֆունկցիաները։

◆ Սեվաստոպոլ է գալիս պետական քարտուղար Ա. Ա. Մակարովը, որը ներկայումս միակ թեկնածուն է համարվում ներքին գործերի մինիստրի պաշտօնի համար։

◆ Պետերբուրգում պաշտպանողական միջոցներ են ձեռք առել ժող. լուս. մինիստր Կասսօյի բնակարանում, որովհետև այս օրերս մինիստրի տան մօտ տեսել են ինչ-որ կասկածելի մարդկանց։

◆ Հաստատ խօսում են ներքին գործերի մինիստր Կուրլովի, Կրժանովսկիի և ժող. լուս. մինիստր Կասսօյի հրաժարականի մասին։

◆ Պետական Դումայի անդամ Շինգարեօվը, մեկնելով Կովկասից, իր կարծիքն է յայտնել Կովկասի մասին, նկատելով՝ որ ամենախճճված հարցը Կովկասում հողային հարցն է, որից փչացվում են հանքային գործը և գիւղատնտեսութիւնը։ Շինգարեօվի կարծիքով առաջին հերթին Կովկասին անհրաժեշտ են՝ լեռնաշղթայի երկաթուղին, զէմստվօ, բարձրագոյն հանքային ու գիւղատնտեսական կրթական հաստատութիւններ։ Ազգային թշնամութեան պատմութիւնները չափազանցութիւններ են։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստրի պաշտօնակատար Ներատօվը հարցրեց Իտալիային և Թիւրքիային, թէ ո՞ր աստիճանի արդարացի են այն լուրերը, թէ հացն ու ածուխը նրանք յայտարարել են պատերազմական ապրանք։

◆ Ինչպէս ասում են, Հիւսիս-Ամերիկական Միացեալ-Պետութիւնների նախագահ Տաֆտը առաջարկել է միջնորդի դեր կատարել Իտալիայի և Թիւրքիայի միջև՝ պատերազմը դադարեցնելու նպատակով։

◆ Բեռլինում մի սենսացիօն լուր է ստացվել, թէ իտալական զօրքը և նաւատորմը այլևս չեն հնազանդվում կառավարութեանը։ Դուքս Աբրուցկին գործում է իր հայեցողութեամբ։

◆ Գերմանական նաւատորմը ինչ-որ գաղտնի ռազմի պատրաստութիւնների մէջ է։ Նաւատորմը գնալու է Հիւսիսային ծովը։

◆ Թիւրք-իտալական պատերազմի պատճառով բոլոր պետութիւնների արժեթղթերը բօրսաներում զգալի չափով ընկան։

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ
ԱՅՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ
Նեվրաստենիայով, սեռական թուլութեամբ, զառամութեամբ, խոլէրիկայով, նեվրալգիայով, սակաւարիւնութեամբ, թոքախտով, սիֆիլիսով, սնդիկային բժշկութեան հետևանքներով, սրտի հիւանդութիւններով (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումով, ալկոհոլիզմով, ողնաշարի հիւանդութեամբ, կաթուածներով, հիւանդութիւններից առաջացած թուլութեամբ, յոգնածութեամբ և այլն։
Վաճառքի համար երևան են եկել բազմաթիւ սակաւարժէք և առողջութեան համար վնասակար՝ մեր ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով, ըստ որում, հիւանդներին մոլորութեան մէջ գցելու համար, կեղծողներն իրանց ռէկլամների մէջ բերում են բժիշկների գիտողութիւնները մեր ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ մասին, վերագրելով այդ գիտողութիւններն իրանց կեղծիքներին։ Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում այն անձերին, որոնք օգտվում են Սպերմինից, նախազգուշացնել այդ կեղծիքներից։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ գիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ փրկարար ազդեցութեան մասին, վերաբերում են բացառապէս ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, հետևաբար և խնդրում ենք գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուան և ֆիրմայի վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ։ Միակ իսկական Սպերմին ներկայանում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, սրուակը 3 րուբլի։
Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար Սպերմինի մասին եղած հարուստ գրականութիւնը՝
ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ՊՐՕՖԵՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում, В. О., 7 лин. 18.
(П. 95413) 12—3
ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

◆ Իտալական պօստի բոլոր բաժանմունքները ամբողջ Թիւրքիայում փակվեցին։

◆ Բ. Դուռը զէնքի է կոչում եւրոպական և ասիական թիւրքական բոլոր զօրաբանակներին։

◆ Լօնդօնում ստացվել է մի սենսացիօն տեղեկութիւն, թէ թիւրքական զօրքերը ներս են խուժել Յունաստան։ Մի քանի դիպլօմատների կարծիքով, Թիւրքիան թէ այդ և թէ ուրիշ անսպասելի արշաւանքներով մտադիր է առաջ բերել եւրոպական միջամտութիւն այժմ սաստկացող թիւրք-իտալական պատերազմում։

◆ Ընդդէմ Իտալիայի կռւող թիւրքաց զօրքերի ընդհանուր հրամանատար է նշանակվել Պարիզում պաշտօնավարող զինւորական գործակալ Ֆեթհի-բէյը։

◆ Մինչև այժմ թիւրք-իտալական պատերազմի մէջ յաղթութիւնը իտալացիների կողմն է։ Թիւրքերն ամենուրեք ջարդվում են։

◆ Թաւրիզից հեռագրում են, որ Սամադ խանի թշնամական գործողութիւնները քաղաքի դէմ վերջացան։

◆ Վերջին յաղթութեան ժամանակ Սալար-ուդ-Դօվլէի բանակից Եփրեմը ձեռք ձգեց բաւական ռազմամթերք ու դրամ։

◆ Սալար-ուդ-Դօվլէին բաւական խոշոր գումարներ են ուղարկել արտասահմանեան բանկերը նրա կողոպտած փողերից։

◆ Թիւրքաց զօրքերը Պարսկաստանի սահմանից վերադառնում են։

◆ Պարսկական անօրմալ վիճակը կը լուծվի Ատրպատականի դէպքերով, ուր և սպասվում է վճռական ճակատամարտ կառավարական զօրքերի և էկս շահի միացորդ հրոսակախմբերի միջև։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

21 սեպտեմբերի

ՆՈՎՈՐՕՍԻՅՍԿ։ Եկան աւտօմօբիլները և դիմեցին Գագրի։ Սուխումի խճուղու վրա № 50 աւտօմօբիլը շրջվել է, որի ժամանակ շօֆէրը ստացել է աննշան վէրք։

ՏԻՒՄԷՆ։ Պոնօմարենկօ ֆիրման Տօբոլսկից 500 վերստ հեռու կապալով վերցրեց ընդարձակ հողաբաժին՝ նաւթ արտադրելու համար։

ՄՕՍԿՎԱ։ Սիբիրսկի բանկում դրամատարից խլել են 10,000 րուբլու երկու չէկ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական դատարանը «Земщина»-ի խմբագրին ենթարկեց երկու շաբաթով բանտարկութեան Վօլինսկի նահանգական վարչութեան գործունէութեան մասին ստայօդ տեղեկութիւններ տպելու համար։

ՆԻԿՕԼԱՅԵՎ։ Մի շաբաթում խօլերայով հիւանդացան գաւառի մէջ 9 հոգի։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային դուման յատկացրեց 5 հազար րուբլի Ստոլիպինի համար Կիևում և Պետերբուրգում արձան կանգնեցնելու։

ԴԱՐՄՇՏԱԴՏ։ Ռուսաց հաւատարմատար Վանդելֆիլլը մեծ դքսին յանձնեց իր հաւատարմագրերը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պօստատար № 4 գնացքը**՝ 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար № 6 գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը**՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր.: Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստատար** № $^{74}/_{75}$՝ 1 ժ. գիշ. Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու)։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ։ **Մարդատար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ **գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **արագ.** № 1 **գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ։ **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՕՄ՝ **մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար** № 5 **գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 9 ժ. 52 ր, առ.: **Արագ** № 1 **գնացքը**՝ 10 ժ. 24 ր.՝ երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան։ **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ։

ԲՈՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագոնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռօստով, միայն վճարելով պլացկարտի գինը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՁԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Փ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՁԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—96

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնովսկայա փողոց, № 16.
Տելէֆօն № 40.
(Ե.ու.կ.) 220. 100—77

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը ամեն օր) 10—11 ժ. առ. (երեխաների)) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տելէֆօն 388.
(Կ.Հ.ու.) 761. 100—19

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(ա. օ.) 669. 100—26

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(Հիմնված է 1860 թ.)
ՈՍԿԷ ՄԵԴԱԼ, ՊԱՐԻԶ 1900 Թ.
ՍԱՊՕՆ ԾԱՂ. ՆՈՂ. „ՄԱՆՈՒՇԱԿ“
Ծաղկող «Մանուշակ» գլիցերինեան սապօնը առաջացնում է թարմ մանուշակի իսկական հոտ, թարմացնող մեծաքանակ փրփուր և տալիս է կաշուին փափկութիւն և քնքշութիւն։
ХИМИЧЕСКАЯ С. ПЕТЕРБУРГСКАЯ ЛАБОРАТОРІЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами — Тифлисъ, Баку, Батумъ.
523. 8—5

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլաևսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Դիւանատունը բաց է երեկոյեան ժամը 4—6-ը։
(ա. օ.) 818. 25—25

Արևելեան-Ասիական Ռուսական Նաւագնացութեան
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳԾԻ ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ
պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն պ. պ. ճանապարհորդների, որոնք կամենում են գնալ Ամերիկա, որ Արևելեան-Ասիական Ռուսական Նաւագնացութեան ճանապարհորդական նաւագնացային տոմսակները վաճառվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ,
Ներսիսեան փողոցի վրա, № 2 տանը։
(օ.մ.) 916. 3—2

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն հաշւիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենապատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլօգրաֆիա (րեմինգտօն և այլ.) և 4) առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Բացվում է կանանց յատուկ բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտ. 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտ. 1-ից առ. 10—12 և եր. 4—7 ժամը։ Ծրագիրը և կանօնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում։
Տ. ՓԻԼՕՍԵԱՆ
(Հ.ու.կ.) 861. 0—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.